

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հայ-Թրքական Բանակցութիւններու Ներքին Ու Արտաքին Արձագանգները

Անցեալ շաբաթ Մոսկուայի մէջ կայացաւ Հայաստան-Թուրքիա բանակցութիւններու առաջին հանդիպումը, որու աւարտին կողմերը առանձին-առանձին հրապարակուած յայտարարութիւններով եկան հաստատելու թէ հանդիպման մթնոլորտը եղած է դրական ու կողմերը պայմանաւորուած են շարունակելու երկխօսութիւնը՝ առանց նախապայմաններու:

Հայկական կողմի կեցուածքը սկիզբէն ի վեր եղած է այն, որ բանակցութիւնները ընթացան առանց նախապայմաններու: Ըստ երեւոյթին թրքական կողմը եւս համաձայն գտնուած է այս տեսակետին հետ ու պատրաստ է շարունակելու խօսակցութիւնները իր հարեւան երկրին հետ, որու նկատմամբ միշտ ալ ունեցած է ոչ բարեկամական, պատմականօրէն թշնամական վերաբերմունք, զայն նկատելով խոչընդոտ իր փառքութեան օրագիրներու իրականացման ճանապարհին:

Երեւանի ակնկալիքները այս բանակցութիւններէն կը կեդրոնացան երկու կետերու վրայ. սահմաններու բացում եւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատում: Եթէ Աճգարա անկեղծ ըլլայ հրապարակային իր արտայայտութիւններուն մէջ ու որոշած է իսկապէս՝ առանց նախապայմաններու յառաջ տանիլ երկխօսութիւնը, ապա երկարատեւ հանդիպումներու կարիք պէտք չէ ունենայ՝ բանալու իր կողմէ փակուած սահմանը, հաստատելու դիւանագիտական յարաբերութիւններ ու փոխանակելու դեսպաններ: Որեւէ ուշացում այս ուղղութեամբ պիտի թարգմանուի որպէս ձգձգում եւ շեղում նախնական համաձայնութենէն:

Առաջին այս հանդիպումը միջազգային շրջանակներու եւ լրատուամիջոցներու կողմէ արժանացաւ մեծ ուշադրութեան: Այդ քայլը ողջունեց Եւրոպական Միութիւնը, պատրաստակամութիւն յայտնելով միւսապէս աջակցելու կողմերուն՝ յարաբերութիւններու կարգաւորման իրենց քայլերուն մէջ: Նոյն ըրաւ մասն ՆԱԹՕ-ն, որուն անդամ է կողմերէն մէկը: Թրքական մամուլը եւս դրական արտայայտուեցաւ առանց նախապայմաններու սկիզբ առած բանակցութիւններուն նկատմամբ: Արեւմտեան որոշ լրատուամիջոցներ կարծիք յայտնեցին, որ Հայ-թրքական յարաբերութիւններու

Հայ-Թրքական Բանակցութիւններու Առաջին Հանդիպումին Հայոց Ցեղասպանութեան Հարցին Շուրջ Խօսակցութիւն Զէ Եղած

Հայ-թրքական բանակցութիւններու գծով Յունուար 14-ին, Մոսկուայի մէջ կայացած առաջին հանդիպումէն յետոյ Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնները գրեթէ միեւնոյն բովանդակութեամբ յայտարարութիւն տարածեցին՝ ըսելով, թէ համաձայնած են յարաբերութիւնները կարգաւորել առանց նախապայմաններու:

«Կառուցողական մթնոլորտում կայացած առաջին հանդիպման ընթացքում յատուկ ներկայացուցիչներն իրենց նախնական մտքերն են փոխանակել Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ երկխօսութեան միջոցով կարգաւորման գործընթացի վերաբերեալ: Կողմերը համաձայնել են շարունակել լիարժէք կարգաւորմանն ուղղուած բանակցութիւնները՝ առանց նախապայմանների», - ըսուած է կողմերու յայտարարութիւններով:

Նշուած է նաեւ, որ հայ եւ Թուրք յատուկ բանագնացներու միջեւ երկրորդ հանդիպման թուականն ու վայրը կ'որոշուին «պատշաճ ժամկէտով՝ դիւանագիտական ուղիներով»:

«Ազատութեան» հետ հարցազրոյցի ընթացքին Ազգային ժողովի փոխնախագահ եւ երկկողմ յարաբերութիւններու կարգաւորման հարցով Հայաստանի յատուկ



Հայաստանի յատուկ ներկայացուցիչ Ռուբէն Ռուբինեան հարցազրոյցի ընթացքին

ներկայացուցիչ Ռուբէն Ռուբինեան յայտնեց որ, Հայոց ցեղասպանութեան հարցին շուրջ խօսակցութիւն չէ եղած Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչ Սերտար Քըլըզի հետ:

Հայաստանը միշտ յայտարարած է, որ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին մէջ Ցեղասպանութեան հետ կապուած նախապայման չկայ, շեշտեց Ռուբինեան? Ընդգծելով, որ այդպէս եղած է միշտ՝ նախկին բոլոր իշխանութիւններուն օրօք, եւ նման հարց

օրակարգ բերելով, ըստ անոր, օրակարգը ուղղակի կը դադրի, եւ այդ կը հասկնայ նաեւ թրքական կողմը:

«Անիմաստ է այդպէս սկսել բանակցութիւններ, որովհետեւ դրանք ոչ մի տեղ չեն տանի», ըսաւ Հայաստանի յատուկ ներկայացուցիչը՝ նշելով, որ առաջին հանդիպման ընթացքին փորձած են քննարկել ոչ թէ սուր անկիւններ յառաջացնող, այլ՝ դրական հարցեր:

Ֆրանսայի Հայկական Կազմակերպութիւնները Կոչ Կ'ընեն Իշխանութիւններուն՝ Բացատրութիւն Պահանջելու Ատրպէյճանէն

Ֆրանսայի Հայկական Կազմակերպութիւններու Համակարգող Խորհուրդը (CCAF) Յունուար 13-ին յայտարարութիւն տարածած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի Ֆրանսայի նախագահի հանրապետական թեկնածու վալերի Պեկրեսին ուղղուած սպառնալիքներուն պատճառաւ: Ալիեւը յայտարարած էր, որ Ատրպէյճանը տեղեակ չէ եղած վալերի Պեկրեսի՝ Լեռնային Ղարաբաղ այցելութեան մասին, սակայն, իմանալու պարագային ակնյայտ է, որ թոյլ չէր տար անոր? Ըբել Լեռնային Ղարաբաղը:

«Արմէնփրես»-ի փոխանցմամբ, CCAF-ը, մասնաւորապէս, կոչ ըրած է Ֆրանսայի իշխանութիւններուն Ատրպէյճանէն բացատրութիւն եւ ներողութիւն պահանջել նախագահական ընտրութիւններու թեկնածուի հասցէին սպառնալիքին: Նախագահի թեկնածու վալերի Պեկրես Հայաստան եւ Արցախ այցելած էր 2021-ի Դեկտեմբերի 21-23-ը:

սայէն՝ Ատրպէյճանի դեսպանին:

Ֆրանսայի նախագահի թեկնածու վալերի Պեկրես տեղական մամուլին ըսած է որ, նախագահական ընտրութիւններուն թեկնածուի հասցէին նման սպառնալիքները շար լուրջ են: Թեկնածուն պէտք է ազատ ըլլայ երթալու? Հոն ուր կը ցանկանայ: Վալերի Պեկրեսը ըսած է, որ այդ սպառնալիքները իրեն չեն վախեցներ, սակայն ցնցուած է սպառնալիքներու վերաբերեալ Ֆրանսական կառավարութեան լուրջ թեկնածուի Պեկրեսը նշած է, որ կը ցանկանար, որպէսզի Ֆրանսական կառավարութիւնը պաշտօնապէս պատասխանէր Ֆրանսայի նախագահական ընտրութիւններու թեկնածուի հասցէին սպառնալիքներու պատճառաւ: Պեկրեսը նշած է, որ կը ցանկանար, որպէսզի Ֆրանսական կառավարութիւնը պաշտօնապէս պատասխանէր Ֆրանսայի նախագահական ընտրութիւններու թեկնածուի հասցէին սպառնալիքներու պատճառաւ:

Նախագահի թեկնածու վալերի Պեկրես Հայաստան եւ Արցախ այցելած էր 2021-ի Դեկտեմբերի 21-23-ը:

Պոլսահայերը Ուրախ Են Երեւան-Պոլիս-Երեւան Թռիչքի Վերսկսումով

Պոլսահայերը ուրախութեամբ ընդունած են հայկական «Flyone Armenia» օդանաւային ընկերութեան Երեւան-Պոլիս-Երեւան ուղղութեամբ թռիչքներու իրականացումը, նկատի առնելով որ, Հայաստան-Թուրքիա օդային հաղորդակցութեան բացակայութիւնը դժուարութիւններ կը ստեղծէր Պոլսահայերուն համար:

«Որպէս Հայաստան յաճախ այցելող մէկը՝ ես կ'ողջունեմ այս զարգացումը: Մինչեւ վերջերս, «AtlasJet»-ը ուղիղ թռիչքներ ունէր, սակայն 2019 թուականի Նոյեմբերին, ընկերութեան սնանկութեան պատճառով չեղարկուեցան բոլոր, ներառեալ՝ դէպի Երեւան թռիչքները: Անկէ ետք, ես ստիպուած էի ճամբորդութիւններս ընել տարանցիկ թռիչքներով: Ուղիղ թռիչքով մօտաւորապէս 2:30 ժամ տեւող ճամբորդութիւնը դարձած էր երկար ու բարդ գործընթաց մը, որ ժամեր կը տեւէր, յատկապէս

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայկական Բանակի Հզորացումը Հրամայական է

ԱՐՄԵՆ ՎԱՐՊԱՆԵԱՆ

Արցախեան 44-օրեայ պատերազմից յետոյ Ատրպէյճանը կտրուկ հեռացաւ ռուսական ազդեցութեան գոտուց, եւ դա օրինաչափ էր, քանի որ Բաքուն միայն այդ գիւրդ կարող էր վճարել Անկարայի արցախեան վերջին ճակատամարտի ելքն ապահովելու համար:

Ատրպէյճանում ռուսական ազդեցութեան վերջին հիմնական ոլորտը՝ պաշտպանութեան համակարգն աստիճանաբար անցաւ Թուրքիայի ազդեցութեան տակ, եւ այդ գործընթացը մեկնարկեց դեռ պատերազմի օրերին, երբ Ատրպէյճանի զինուած ուժերից հեռացուեց Ռուսաստանում ռազմական կրթութիւն ստացած բարձրագոյն սպայական կազմը: Օրերս էլ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար՝ Զաքիր Հասանովն այցելել էր Հէյդար Ալիեւի անուան բարձրագոյն ռազմական ուսումնարան, որտեղ պնդել էր, թէ զինուորների ուսուցումն ու պատրաստումը բարձրագոյն ռազմական ուսումնարանում իրականացուել են այնպիսի ծրագրերով, որոնք կիրառուում են Թուրքիայի պաշտպանութեան նախարարութեան ուսումնարաններում: Նրա խօսքերով՝ Ատրպէյճանի ռազմական բարձրագոյն ուսումնարանի ծրագիրը համապատասխանեցուել է Թուրքականին: Այս միտումը քողարկելու համար Ալիեւը յայտարարում է, թէ Ատրպէյճանը կը շարունակի գնել ռուսական զէնքը, սակայն այդ երկրի ձեռք բերած սպառազինութեան կառուցուածքն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ հիմնականում գնում է զբաղակալական ու հրետանային համակարգէր, իսկ Աթսները եւ գերձգրիտ զինատեսակները, որոնք աղբբջանական բանակի հիմնական մասն են կազմում, գնում է Թուրքիայից ու իսրայէլից:

Նորից Հին «Պլաստիկան» են Միացրել

Եւ մինչ Ատրպէյճանի իշխանութիւնները յայտարարում են աւտոբուսային երթուղիները դէպի Շուշի բացելու մասին, մեր խորհրդարանում էլ բացուում է նոր «կուրս-դաւմադալ» եթերաշրջանը:

Սկսուեց նրանից, որ Աժ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Ազնեսա Նամոյեանն իր ելոյթում Ռուբէն Ռուբինեանի Թուրքիայի ազդեցութեան գործակալ լինելու մասին ակնարկեց, թէ տենց բաներ են ասում խորհրդարանում, Ռուբինեանը հզոր հակահարուած հասցրեց՝ սպառնալով մի ուրիշ ձեւի խօսել իրեն ազդեցութեան գործակալ համարողների հետ: Յետոյ՝ վէճ, յետոյ՝ յարաբերութիւնների պարզում, յետոյ՝ ընդմիջում, իսկ հիմա էլ պարզում են, թէ ով ինչ չափով է Թուրքերի հետ գաղտնի բանակցել:

Մեզ այս պղպղակային սերիալում մի բան է հետաքրքրում. «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչները՝ բացի Թուրք-մուրք գործակալ երգելուց, ուրիշ երգչգիտե՞ն: Հասկացանք, այս իշխանութիւնների մասով ինչ ասուելու էր, ասուել է, գիտենք՝ ինչ են իրենցից ներկայացնում, ենթադրում ենք, թէ ինչ նոր փորձանքներ

Ձէնք գնելը բովանդակային վերափոխման հետ մեծ հաշուով կապ չունի, վերջին հաշուով նաեւ Թուրքիան է ռուսական զէնք գնում, ինչը գործընթացների հուժիւնը չի փոխում: Ատրպէյճանի բանակն այն վերջին ոլորտն էր, որը լիարժէքօրէն իր ազդեցութեան տակ էր պահում Ռուսաստանի Դաշնութիւնը: Նախի եւ գազի արտահանման հարցում, որն Ատրպէյճանի տնտեսութեան հիմնական մասն է կազմում, Ռուսաստանի ներգրաւուածութիւնը շատ փոքր է: Այստեղ դոմինանտ (տիրող) են Մեծ Բրիտանիան եւ իսրայէլը, իսկ Թուրքիան ոչ միայն օգտուում է Պաքու-ձեյհան նախամուղից, այլեւ ատրպէյճանական գազն ստանում է գրեթէ ինքնարժէքով, իսկ պատերազմից յետոյ Թուրքական ընկերութիւններն սկսեցին շահագործել Արցախի բռնազաւթած տարածքների ոսկու եւ պղնձի հանքերը:

Միւս կողմից էլ գրեթէ ամենամսեայ ռեժիմով անցկացուում են ատրպէյճանաթուրքական զորավարժութիւններ, իսկ ատրպէյճանական զինուժի առանձին անցկացուող վարժանքներին սկսել են պարտադիր մասնակցել Թուրքական բանակի զինուորական մասնազետ-խորհրդատուները:

Ստեղծուած իրավիճակում, մեր կարծիքով, Ռուսաստանին այլ բան չի մնում, քան աջակցել Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերի բարեփոխումներին՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակակից բանակների չափանիշներին: Հայաստանի զինուած ուժերի հզորացմամբ միայն Ռուսաստանը կը կարողանայ ամուր պահել իր դիրքերը Հարակից կողմից, առաւել եւս, որ Ատրպէյճանն արդէն, կարծես, անվերադարձ հեռանում է ռուսական ազդեցութիւնից:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

ՇԱՐ.Ղ ԷՋ 5

Հայաստանն Ամերիկա-Ռուսական Բանակցային Փաթեթում

ՅԱՎՈՐ ԲԱՐԱՆԵԱՆ

Միացեալ Նահանգների պետքարտուղար Բլինքենը ամերիկա-ռուսական ըստ հուժեան եռօրեայ եւրոպական բազմաձեւաչափ բանակցութեան առնչութեամբ յայտարարել է, որ կողմերը բաւականին նիւթ են փոխանցել միմեանց եւ կայ «մարսելու» ժամանակի անհրաժեշտութիւն: Բլինքենը յայտարարել է, թէ ԱՄՆ ներկայումս բանակցելու է իր դաշնակիցների հետ: Ուկրաինայի շուրջ ճգնաժամի առումով նա միաժամանակ ասել է, թէ ՌԴ նախագահ Պուտինը տիրապետում է բանակցութեանը վերջնական որեւէ որոշում չաչտնելու ձգձգելու արուեստին:

Ամերիկա-ռուսական եռօրեայ բանակցութեան արդիւնքը տեսանելի չէ, միաժամանակ կասկածից վեր է, որ բանակցութիւնը ներառել է հարցերի լրջագոյն շրջանակ եւ թերեւս կասկածից վեր է, որ կողմերի մօտեցումները եկել են որոշակիօրէն նոր կէտի: Բարդ է գնահատել, թէ ինչպիսին է այդ կէտից, որ կար մինչեւ բանակցութիւն, սակայն այն, որ Միացեալ Նահանգները խօսում է իր եւրոպական դաշնակիցների հետ բանակցութեան անհրաժեշտութեան մասին, նշանակում է անկասկած նոր իրավիճակի առկայութիւն: Հրապարակային մակարդակում կողմերը չեն շարժուել իրենց դիրքորոշումներից, սակայն նաեւ գուցէ հետաքրքրութեան է արժանի այն, որ հէնց ամերիկա-ռուսական բանակցութեանը գուզահեռ յայտարարուեց Ղազարխանից ՀԱՊԿ գորամիտուրման դուրսբերման մասին, ինչը շատերի մօտ առաջացրեց հարց, կապուած մուտքի եւ ելքի արագութեան հետ: Իհարկէ ուղիղ կապը ամերիկա-ռուսական բանակցութեան հետ նշմարելի չէ, սակայն ինչպէս ուշադրութեան էին արժանի դազարխանի իրադարձութիւնները իրենց զարգացման բուռն արագութեամբ եւ ՀԱՊԿ մուտքով՝ սպասուող ամերիկա-ռուսական բանակցութեանն ընդառաջ, այդպէս էլ ուշադրութեան է արժանի դրան գուզահեռ ՀԱՊԿ բաւականին արագ ելքը: Արդեօք դա նշանակում է, որ Ղազարխանի ամերիկա-ռուսական բանակցային փաթեթի մաս էր, եւ հետեւաբար ինչն էր այնտեղ պայմանաւորութեան եւ ինքը դրա խախտման տրամաբանութեամբ:

Բարդ է ասել, սակայն այս հանգամանքը իհարկէ արժանի է դիտարկման, ուշադրութեան արժանի է Հայաստանի մասնակցութեան համատեքստում, պատկերացնելու համար, թէ Հայաստանն ինչ տեղ է զբաղեցրել այդ «փաթեթում»՝ գուտ տեխնիկական խնդիր կատարողի, թե՞ այդուհանդերձ քաղաքական գործօնի: Ամերիկա-ռուսական բանակցութիւնը ընդհանրապէս Հայաստանի համար առաջ է բերում այդ խնդիրը, ինչին իհարկէ անդրադարձել եմ բազմիցս:

Հայաստանը յայտնուում է մուրճի ու սալի նեղացող արանքում, ինչպէս ընդունուած է ասել, ինչը բնականաբար մեր երկրի համար եթէ ոչ վատթարագոյն, ապա վատթարագոյն սցենարն է: Միեւնոյն ժամանակ Հայաստանը չի կարող նստել եւ սպասել «բախտին», եթէ այն

բերի՝ ԱՄՆ ու Ռուսաստանը կը պայմանաւորուեն համակցութեան այնպիսի տրամաբանութեամբ, որը Հայաստանին կ'ապահովի կենսագործունէութեան մեծ տարածութիւն, իսկ, եթէ ոչ՝ ապա Հայաստանը ուղղակի «կը ճգմուի»: Միաժամանակ, Հայաստանի անելիքը նաեւ ԱՄՆ, թէ Ռուսաստան ընտրութիւնը չէ, լինի այդ հասկացութեան ուղիղ, թէ պայմանական իմաստով: Այդ ընտրութիւնն էլ վատագոյնն է, որ իբրեւ անելիք կարող է որոշել Հայաստանը: Հայաստանը թերեւս պէտք է փորձի աշխատել ամերիկա-ռուսական բանակցային գործընթացի փուլային ինտենսիւութեանը գուզահեռ ինտենսիւ կերպով աշխատել թէ Մոսկուայի, թէ Վաշինգտոնի հետ, ձգտելով ազատել իր համար տարածութիւն եւ այդ տարածութեան շրջանակում ձեւակերպել երկու կողմի համար էլ ընդունելի տեղային նշանակութեան միջավայր, որը մի կողմից Ռուսաստանին կ'օժտի Հայաստանի հարցում վստահութեամբ, միւս կողմից ԱՄՆ համար համոզիչ կը լինի, որ Երեւանը ժողովրդավարութիւնն ոչ թէ խաղում է, այլ կառուցում, պարզապէս շատ բարդ եւ դժուարին միջավայրում:

Սա շատ բարդ խնդիր է, որը լուծելու համար պահանջուում է իսկապէս լայն գիտակցում ու ընդգրկում: Սա առաջին հերթին քաղաքական իշխանութեան պատասխանատուութեան դաշտում է, սակայն ոչ միայն: Խնդիրը ընդհանրապէս բոլոր այն ուժերի պատասխանա-

ՇԱՐ.Ղ ԷՋ 5

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁՊԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Քննարկուած են Հայաստանի Վերափոխման Մինչեւ 2050 թուականի Ռազմավարութեան Վերաբերող Հարցերը

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի մօտ տեղի ունեցած է խորհրդակցութիւն, որու ընթացքին քննարկուած են Հայաստանի վերափոխման մինչեւ 2050 թուականի ռազմավարութեան իրականացման ու հնարաւոր վերափոխման առնչուող հարցեր:

Խորհրդակցութեան սկիզբը վարչապետը նշած է. «Այսօր հաւաքուել ենք քննարկելու եւ վերանայելու Հայաստանի վերափոխման մինչեւ 2050 թուականի ռազմավարութիւնը եւ, ի վերջոյ, հասկանալու այդ ռազմավարութեան յարաբերութիւններն ընթացիկ իրավիճակի հետ, գնահատելու կապերը կառավարութեան գործունէութեան եւ միջոցառումների ծրագրերի հետ: Նաեւ, ըստ այդմ, պէտք է տեսնենք, թէ ինչ կարգաբերումների անհրաժեշտութիւն կայ, ընդհանրապէս կայ, թէ՛ չկայ, եւ ինչպէս ենք շարունակում ռազմավարութեան իրականացումը, ի հարկէ նախ եւ առաջ գնահատելով դրա այժմէականութիւնը:

Այս ընթացքում իմ դիտարկումները եւ աշխատանքը ռազմավարութեան հետ ցոյց է տալիս, որ այն իր այժմէականութիւնն ընդ-

հանրապէս ոչ միայն չի կորցրել, այլեւ հակառակը, նոյնքան այժմէական է, որքան նրա ընդունման եւ հրապարակման պահին: Մենք այս առումով հիմա պէտք է կողմնորոշուենք մեր հետագայ անելիքների շուրջ»:

Յաջորդիւ քննարկուած են ռազմավարութեամբ նախատեսուող ծրագրերու, նպատակներու, մօտեցումներու լաւարկման, վերափոխման, ներդաշնակեցման, փաստաթուղթով նախատեսուող միջոցառումներու այժմէականութեան գնահատման, նոր բովանդակութեան մշակման վերաբերող շարք մը հարցեր: Ներկայացուած են տարբեր առաջարկութիւններ եւ դիտարկումներ:

Ամփոփելով խորհրդակցութիւնը, վարչապետ Փաշինեան նշած է, որ վերոնշեալ ռազմավարութիւնը անհրաժեշտ է դիտարկել որպէս ուղենիշ. վերափոխման պատճառով այն կառավարութեան համար պէտք է դառնայ կիրառական գործիք: Գործադիրի ղեկավարը պատասխանատուներուն յանձնարարած է հետեւողականօրէն շարունակել աշխատանքները ռազմավարութեան լաւարկման շուրջ:

Պատգամաւորը Կ'առաջարկէ Զինուորական Ծառայութեան Ազատել Զոհուծներու Կրտսեր Եղբայրները

Եթէ պատերազմի ժամանակ զոհուած է հայրը կամ եղբայրներէն մէկը, ապա ընտանիքին կրտսեր եղբայրը, ըստ իշխանական պատգամաւորին, կրնայ ազատուիլ զինուորական պարտադիր ծառայութենէն:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Հայկ Սարգսեան կ'առաջարկէ զինուորական պարտադիր ծառայութենէն ազատել մարտական գործողութիւններու զոհերուն կրտսեր եղբայրները: Այսինքն՝ եթէ պատերազմի ժամանակ զոհուած է հայրը կամ եղբայրներէն մէկը, ապա ընտանիքին կրտսեր եղբայրը, ըստ իշխանական պատգամաւորին, կրնայ ազատուիլ զինուորական պարտադիր ծառայութենէն:

Նախագիծին հեղինակը այս միտքը չղացած է 44-օրեայ պատերազմի աւարտէն յետոյ զոհուածներու ընտանիքներուն հետ հանդիպումներու հետեւանքով: Նախագիծը օրէնք դառնալու պարագային պիտի վերաբերի մարտական բոլոր գործողութիւններուն ժամանակ տեղի ունեցած մահուան ելքով միջազգայնացուած: Նախագիծին մէջ ներկայացուած է հաշուարկ, թէ փոփոխու-



Պատգամաւոր Հայկ Սարգսեան թիւններու հետեւանքով օրէնքը քանի շահառու կրնայ ունենալ, սակայն, Հայկ Սարգսեանի պնդմամբ, փոփոխութիւններէն յետոյ զինուորական պարտադիր ծառայութենէն ազատուող քաղաքացիներուն թիւը մեծ պիտի չըլլայ եւ անմիջականօրէն պիտի չազդէ զինուորներու քանակին վրայ: Այս գորակոչին օրէնքը կը տարածուի քանահինգ մարդու վրայ: Պաշտպանութեան նախարարութիւնը դեռ դիւրքորոշում չէ յայտնած նախագիծին վերաբերեալ:

ՄԻԵԴ-ը ճանչցած է 2008-ի Ընտրութիւններէն Ետք Փաշինեանի Իրաւունքներու Խախտումը

Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանը (ՄԻԵԴ) «Նիկոլ Փաշինեան ընդդէմ Հայաստան» գործով վճռած է, որ խախտուած է Փաշինեանի ազատութեան եւ անձնական անձեռնմխելիութեան, հաւաքներու ազատութեան իրաւունքը: Հայաստանի գործող վարչապետը դրամական փոխհատուցման պահանջ է ներկայացուցած պետութեան: Գործը կը վերաբերի այն ժամանակ ընդդիմադիր գործիչ Փաշինեանի ազատագրկման, որ տեղի ունեցած է 2008 թուականի ընտրութիւններէն ետք, երբ Փաշինեան կ'աշակցէր նախագահի թեկնածու Լեւոն Տէր Պետրոսեանին: Ան անազատութեան մէջ մնացած է 2009-ի Հոկտեմբերէն մինչեւ Յունուար 2010: Վճիռին մէջ նշուած է, որ խախտուած է նաեւ Փաշինեանի խօսքի, հաւաքներու ազատութեան իրաւունքը:

Սերժ Սարգսեան Ընդդէմ Խաչատուր Սուքիասեանի Գործով Դատարանը Կողմերէն Ապացոյցներ Պահանջեց



Նախկին Գախազահ Սերժ Սարգսեան

Սերժ Սարգսեան ընդդէմ Խաչատուր Սուքիասեանի գործով Յունուար 17-ի դատական նիստին, դատաւորը, ըստ օրէնքի, որոշեց կողմերէն իւրաքանչիւրին գործողութիւնները: Երբորդ նախագահին ներկայացուցիչները պէտք է ապացուցեն, որ իշխանական պատգամաւորը խորհրդարանի բարձր ամպիոնէն տուեալներ ներկայացուցած է, որոնք վնաս հասցուցած են Սերժ Սարգսեանի պատիւին ու արժանապատուութեան:

Պատասխանող կողմը, իր հերթին, պէտք է ապացուցէ, որ նախկին նախագահին մասին Խաչատուր Սուքիասեանի աղմկայարոյց յայտարարութիւնը կը համապատասխանէ իրականութեան, ինչպէս նաեւ փաստեր բերէ, որ Սերժ Սարգսեանի մասին խօսելով «Քաղաքացիական Պայմանագիր»-ի պատգամաւորը առաջնորդուած է հանրային շահով:

Նախկին նախագահը գործարար պատգամաւորը դատի տուած է ամիսներ առաջ, երբ վերջինս խորհրդարանին մէջ յայտարարեց, թէ Սարգսեանը պաշտօնավարման ընթացքին 100 միլիոն տոլարէն աւելի գումար պարտուած է Գերմանիոյ Պատեն-Պատեն քաղաքի խաղատուներուն մէջ: Սերժ Սարգսեան այս խօսքերու հերքում եւ 1 միլիոն դրամ կը



Պատգամաւոր Խաչատուր Սուքիասեան

պահանջէ՝ իր պատիւին ու արժանապատուութեան պատճառուած վնասը հատուցելու համար:

Խաչատուր Սուքիասեանի յայտարարութեան յետոյ «Փաստերու Ստուգման Հարթակը» հետաքննութիւն կատարած էր, ըստ որուն, նախագահական ինքնաթիւը Սերժ Սարգսեանի նախագահութեան տասը տարիներուն շահագործուած է եւ առանց ծառայողական անհրաժեշտութեան պետական միջոցներու հաշուոյն տանեակէ աւելի թուիչներ կատարած է դէպի գերմանական Պատեն-Պատեն:

Սարգսեանի փաստաբան Ամրամ Մակինեանը անցեալ դատական նիստին լրագրողներուն հետ գրոյցի ընթացքին հաստատած էր, որ նախագահը եղած է այդ քաղաքին մէջ. օգտուելով իրեն ընձեռուած ընկերային երաշխիքներէն՝ իր արձակուրդը անցուցած է: Քաղաքները քայքայելու մասին պնդումը հերքած է ինչպէս փաստաբանը, այնպէս ալ անձամբ Սերժ Սարգսեանը:

Դատական նիստին ներկայ էր Սերժ Սարգսեանը: Նիստը յետաձգուեցաւ, այս գործով պատասխանող է նաեւ Ազգային ժողովը, որուն ներկայացուցիչը դատարան էր եկած: Յաջորդ նիստը 18 Մարտին է:

Լեւոն Տէր-Պետրոսեան Խօսած Է Ներքաղաքական Իրավիճակին Շուրջ

«Փաշինեանական վարչախումբը ամէն գնով ձգտում է պահպանել իշխանութիւնը, Քոչարեանի եւ Սարգսեանի ղեկավարած ընդդիմութիւնը ամէն գնով ձգտում է զաւթել իշխանութիւնը», - պատասխանելով Հայաստանի ներքաղաքական իրավիճակի վերաբերեալ iLur կայքէջի հարցին, յայտարարած է ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան:

«Ըստ այդմ, երեք ճամբարներում էլ իսպառ բացակայում է պետական շահի փոխակցութիւնը, ինչի անխուսափելի հետեւանքը մեր ազգին սպառնացող նորանոր աղէտներն են: Ելքի փնտրտուքը բացառապէս հակամարտող կողմերի եւ մտաւորականութեան պարտականութիւնն է:

«Հասարակութեան մնացեալ շերտերը իրավիճակի վրայ ազդելու լծակներ այս պահին չունեն:



ՀՀ առաջին Գախազահ Լեւոն Տէր-Պետրոսեան Քաղաքացիական եւ լրատուական դաշտի ակտիւ դերակատարները, գրեթէ ամբողջութեամբ, սպասարկում են յիշեալներէ ճամբարների շահերը», - յայտարարած է առաջին նախագահը:

ԼՈՒՐԵՐ

Առանց Նախապայմաններու Սահմաններու Բացումը Կը Բխի Հայաստանի Շահերէն. ԱԺ Փոխնախագահ Յակոբ Արշակեան

Թուրքիոյ հետ բանակցութիւններուն համար Հայաստանի օրակարգը չէ փոխուած, այն կը շարունակէ ըլլալ առանց նախապայմաններու սահմաններու բացումը եւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումը: Այս մասին վստահեցուց ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Յակոբ Արշակեան, խորհրդարանին մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին:

«Հայաստանի անկախութիւնից ի վեր Հայաստանի սահմանները լարուած են, եւ մենք խաղաղ պայմաններում հազարաւոր զոհեր ենք ունեցել թէ՛ պատերազմի ընթացքում, թէ՛ խաղաղ պայմաններում: Կարծում եմ՝ այն խաղաղութեան օրակարգը, որ մենք հիմա յառաջ ենք տանում եւ մեր ժողովրդից դրա համար քուէ ենք ստացել, հէնց միտուած է նրան, որ կարողանանք մեր սահմանների եւ Հայաստանի անվտանգութիւնն օր առօրէի ապահովել, որպէսզի այլեւս խաղաղ պայմաններում գինուորներ չզոհուեն, որպէսզի այլեւս Հայաստանը պատերազմների մէջ չյայտնուի», ըսաւ Արշակեան:

Իսկ ինչ կը վերաբերի Հայաստանի եւ Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչներու հանդիպման, ան նշեց, որ այդ ընդամենը իրենց առաջին հանդիպումն էր, եւ բնական է որ շատ տեղեկատուութիւն չկայ:

«Առաջին հանդիպումն է տեղի ունեցել, մարդիկ ծանօթացել են, մեր կողմն իր օրակարգն է յառաջ բերել, թէ մենք ինչով ենք հետաքրքրուած, թուրքական կողմն իր օրակարգն է բերել, տեղի է ունեցել քննարկում: Այդ քննարկումից յետոյ կողմերը գնացել են իրենց մայրաքաղաքներ՝ ճշգրտելու, քննարկելու այդ օրակարգային հարցերը», ըսաւ Արշակեան:

Անդրադառնալով այն հարցումին, թէ Հայաստան ինչնով հետաքրքրուած է, ան ըսաւ՝ առանց նախապայմաններու սահմաններու



Ազգային ժողովի փոխնախագահ Յակոբ Արշակեան

բացմամբ եւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատմամբ:

«Մեր օրակարգը չի փոխուել: Անկախ Հայաստանի բոլոր իշխանութիւնները յայտարարել են, որ թուրքերի հետ խօսելու մեր օրակարգը հետեւեալն է՝ առանց նախապայմանների Թուրքիայի հետ սահմանները պէտք է բացուեն եւ հաստատուեն դիւանագիտական յարաբերութիւններ», ըսաւ Ազգային ժողովի փոխնախագահը:

Հարցումին, թէ ի՞նչ վստահութիւն կայ, որ Թուրքիան յառաջ պիտի չքաշէ նախապայմաններ, Արշակեան ըսաւ, որ նման վտանգ կայ: Արշակեան յիշեցուց, որ այդ հանդիպումները, բանակցութիւնները տեղի կ'ունենան Ռուսիոյ միջնորդութեամբ, Ռուսիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը նոյնպէս դրական կ'արձագանգէ: «Յոյս ունեմ, որ նաեւ միջազգային գործընկերների օգնութեամբ մենք կը կարողանանք սահմաններ բացելու, դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու հարցը լուծել: Եւ դա բխում է ՀՀ շահերից», ըսաւ Ազգային ժողովի փոխնախագահը:

Արցախի Սեչ Յնարար Եւ Սահմանադրական Փոփոխութիւններ



Արցախի Գախազահը հասարակական կազմակերպութիւններուն Գերկայացուցիչներուն հետ հանդիպումի ընթացքին

Արցախի մէջ կը նախատեսուի ստեղծել Հանրային խորհուրդ, նաեւ հնարաւոր են սահմանադրական փոփոխութիւններ: Արցախի նախագահը այս հարցերը քննարկած է շարք մը հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Արցախի Հանրային խորհուրդը պիտի ըլլայ ապաքաղաքական

մարմին, պիտի ձեւաւորուի հասարակական հատուածի ներկայացուցիչներէն եւ միտուած պիտի ըլլայ պետական կառավարման գործընթացներուն քաղաքացիական հասարակութեան մասնակցութեան ապահովման:

Նախագահ Արայիկ Յարութիւնեանի խօսքով՝ յառաջիկային պիտի ստեղծուի համապատասխան


Երեւան Առաջարկներ Ներկայացուցած Է Սահմանազատման Յանձնաժողով Ձեւաւորելու Հարցով. Սերկէյ Լաւրով

Հայաստան նոր առաջարկներ ներկայացուցած է Ատրպէյճանի հետ սահմանազատման յանձնաժողով ձեւաւորելու հարցով, որ ռուսական կողմի միջնորդ պիտի փոխանցուի Պաքուին: Այդ մասին յայտնած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով:

«Բառացիօրէն երէկ ես շփուած եմ Հայաստանի իմ գործընկերոջ հետ, որու մօտ նոր առաջարկներ կան, անոնք մենք կը փոխանցենք Պաքուին», - ըսած է Լաւրով՝ աւելցնելով, որ Ռուսաստան կողմ է սահմանազատման շուտափոյթ աշխատանքներուն՝ ընդգծելով, որ այդ գործընթացը կապ չունի Լեռնային Ղարաբաղի շրջանի ու կարգաւորման խնդրի հետ: «Մենք հանդէս կու գանք՝ որքան հնարաւոր է շուտ ձեռնամուխ ըլլալ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ սահմաններու սահմանազմման: Այդ չի վերաբերիր Ղարաբաղեան տարածաշրջանին եւ կարգաւորման հարցերուն: Այն գուտ երկկողմանի հարց է, որ արդէն գրեթէ մէկ տարի է որ մենք կ'առաջակենք՝ սկսիլ մշակումները, անոր համար ստեղծելով սահմանազմման ու սահմանազտման յանձնաժողով»:

Ռուսաստանի դերին մասին Լաւրով ըսած է, թէ կ'առաջարկեն այդ յանձնաժողովին խորհրդատու ընդգրկուիլ՝ հաշուի առնելով ռուսական գլխաւոր շտապի եւ այլ կառույցներու մէջ գոյութիւն ունեցող քարտէզները, ուր արտացոլուած են նախկին ԽՍՀՄ ձեւաւորման տարբեր փուլերն ու միութեանական հանրապետութիւններու միջեւ վարչական սահմաններու փոփոխութիւնները:

Ան ըսած է, որ սահմանազմման ու սահմանազատման յանձնաժողով ստեղծելու համար կողմերու համապատասխան առաջարկներ կան, ու որպէսզի յանձնաժողովը ստեղծուի, առաջին հերթին պէտք է համաձայնեցնել պայմանները, որոնք հիմա կը քննարկուին, բայց այնտեղ տարածաշրջաններ կան. «Մեր դիրքորոշումը յստակ է՝ պէտք է նստիլ ու արդէն պաշտօնապէս ձեւաւորուած յանձնաժողովի ծիրէն ներս լուծել բոլոր այն հարցերը, որոնք հիմա դեռ կը



Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով

մնան չհամաձայնեցուած»:

Լաւրով հաստատած է, որ Նոյեմբերին Սոչի կայացած Ռուսաստանի, Ատրպէյճանի ու Հայաստանի դեկլարներու եռակողմ հանդիպման ձեռք ձգուած համաձայնութիւնները յոյս կը ներշնչէին, որ յանձնաժողովը շուտով կը ձեւաւորուի:

«Սոչի իրօք կար սկզբունքային համաձայնութիւն, եւ նոյնիսկ մամուլի հետ շփումներուն յոյս յայտնուած էր, որ յանձնաժողովը կը ձեւաւորուի մինչեւ 2021 թուականի աւարտը, բայց կեանքը բարդ է, յանձնաժողովի ստեղծման առաջընթացը իրօք բաւարար չէ, բայց մենք կ'աշխատինք, կը տեսնենք, ինչպէս ընել, որ յանձնաժողովը որքան հնարաւոր է շուտ աշխատի», - ըսած է Լաւրով:

Տարածաշրջանութիւններու մասին Լաւրով նշած է՝ «Ինչ պէտք է ընել, որ այն սկսի աշխատիլ, այդ բարդ է»: «Այդ թեմայի քննարկումներու ընթացքին մենք համոզուած ենք, որ ամենալաւը այդ յանձնաժողովը ստեղծելն է, օրակարգին վրայ ընդգրկելով այն հարցերը, որոնք պէտք է լուծուին առաջնահերթութեան կարգով»:

Սահմանազատման յանձնաժողով ձեւաւորելու վերաբերեալ «Ազատութիւնը» հարցում ուղարկած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան, թէ հակական կողմէն ինչ նոր առաջարկներ ներկայացուած են, եւ դեռ պատասխան չկայ:

Երեւան ԵԱՀԿ-ին Եւ Մինսքի Խումբին Կոչ Կ'ընէ Խաղաղ Գործընթացը Վերսկսելու Միջոցներ Ձեռնարկելու

Հայաստան կոչ ըրած է ԵԱՀԿ նախագահութեան եւ ԵԱՀԿ Մինսքի խումբը համանախագահող երկիրներուն՝ գործուն միջոցներ ձեռնարկելու, դադարեցնելու համար Ատրպէյճանի սադրանքները եւ վերսկսելու հակամարտութեան կարգաւորման խաղաղ գործընթացը:

ԵԱՀԿ Մշտական խորհուրդի յատուկ նիստին ԵԱՀԿ-ի մօտ Հայաստանի առաքելութեան ղեկա-

վար, դեսպան Արմէն Պապիկեան ընդգծած է թէ, ԵԱՀԿ տարածքի վրայ ուժի կիրառումը չի կրնար «լուծել» որեւէ հակամարտութիւն եւ ատրպէյճանական կողմէ ուժի կիրառումը, որպէս հակամարտութեան կարգաւորման օրինաւոր գործիքի ներկայացումը կը վտանգէ ԵԱՀԿ-ի տարածաշրջանի անվտանգութիւնը եւ կը վարկաբեկէ հակամարտութիւններու խաղաղ կարգաւորումը:

աշխատանքային խումբ, որ հանրային քննարկումներու առարկայ պիտի դարձնէ սահմանադրական հնարաւոր փոփոխութիւններու անհրաժեշտութեան հարցը:

Նախագահը շեշտած է, որ

հնարաւոր սահմանադրական բարեփոխումները պիտի մշակուին բացառապէս Արցախի անկախութեան միջազգային ճանաչման եւ պետականութեան ամրապնդման ծիրին մէջ

Արմեն Սարգսեան «Էքսփո 2020 Տուպայ» Ցուցահանդեսներու Կեդրոնին Մէջ Այցելած Է Հայաստանի Տաղաւարը



Նախագահ Արմեն Սարգսեան «Էքսփո 2020 Տուպայ» ցուցահանդեսին կ'այցելէ Հայաստանի տաղաւարը

Աշխատանքային այցով Արաբական Միացեալ Էմիրութիւններ գտնուող Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան «Էքսփո 2020 Տուպայ» համաշխարհային ցուցահանդէսներու կեդրոնին մէջ, 17 Յունուարին, հիւրընկալուած է Հայաստանի տաղաւարին մէջ:

Արմէն Սարգսեան շրջած է տաղաւարին մէջ, ծանօթացած է ներկայացուած ցուցադրութիւններուն:

«Էքսփո 2020 Տուպայ»-ին Հայաստան հանդէս կու գայ «Էթնոֆեք» գաղափարով՝ ներկայացնելով Հայաստանի ցեղային առանձնատկութիւնները եւ արհեստագիտական յաւակնութիւնները: Տաղաւարի տնօրէն Լիլիթ Յակոբեանը

նախագահին տեղեկութիւններ ներկայացուցած է ցուցադրութեան, տաղաւար այցելութիւններու, գործարար շփումներու մասին:

Նախագահը կարեւորած է համաշխարհային այս ցուցահանդէսին Հայաստանի մասնակցութիւնը եւ յոյս յայտնած, որ այն հնարաւորութիւն պիտի տայ ոչ միայն նոր գործարար յարաբերութիւններ հաստատելու, այլեւ փորձի եւ գիտելիքներու փոխանակման հարթակ դառնալու:

Հանրապետութեան նախագահը այցելած է նաեւ «Էքսփո 2020»-ը հիւրընկալող՝ Արաբական Միացեալ Էմիրութիւններու տաղաւար, ծանօթացած՝ ցուցադրութիւններուն, գրառում կատարած է պատուաւոր հիւրերու գիրքին մէջ:

Քանոնահարուհի Սարիաննա Գեորգեան Արժանացած Է «Global Cultural Initiative World Folk Vision» Գլխաւոր Մրցանակին



Քանոնահարուհի Սարիաննա Գեորգեան


Անգլիոյ մէջ կայացած Global Cultural Initiative World Folk Vision համաշխարհային մրցութեան փառատօնին Հայաստանը ներկայացնող քանոնահարուհի Մարիաննա Գեորգեանը արժանացած է գլխաւոր մրցանակի՝ «աշխարհի ժողովուրդներու երաժշտութիւն» դասակարգին մէջ: 115 երկիրներէ 3950 մասնակիցներու մէջէն «գլխաւոր մրցանակը» բաժինին կ'է հայ քանոնահարուհին:

«Իմ տարում Հայաստանի միակ ներկայացուցիչը ես էի եղել, ով անցելիք: Իմ համար շատ ուրախալի էր մասնակից լինել նման համաշխարհային մրցութի քանոն նուագարանով: Շատ հետաքրքիր է օտար ազգին ներկայացնել քո ազգային նուագարանը, քո ազգային մեղեդին, որովհետեւ ամբողջ աշխարհում դու ոչ մէկի ոչնչով չես

կարող զարմացնել», - ըսած է Գեորգեան «Ազատութիւն» ռատիոկայանին, ապա շարունակելով, - «Մասնակցում էին վաստակաւոր արտիստներ, ժողովրդական արտիստներ, մեր հարեւան պետութիւնները եւս մասնակցում էին՝ Աատրպէյճան, Թուրքիա: Միակ քանոնահարը ես էի եւ իմ համար ուրախալի էր, որ օտարազգիներու կայացուցիչները, որ իրենք էլ ունեն իրենց ազգային դիմագծով քանոն նուագարան, չէ, որ գործիքը արեւելեան է, ուղղակի իւրաքանչիւրինս համապատասխանում է մեր երկրին, մեր նուագելաոճին: Իմը հայկական քանոն է, ես նուագում եմ հայկական տեխնիկայով»: Միջազգային բազմաթիւ մրցութիւններու դափնեկիր՝ Մարիաննա Գեորգեանը նաեւ 30-է աւելի ծրագրերու հեղինակ է:

«Երիտ-թուրքերու Հետ Գործակցութեան Փաստաթուղթ Ստորագրած Ուժը Կը Կասկածի Որ Ես Լրտես Եմ». Ռուբինեան

«Ես ամենեւին չեմ կիսում այն տեսակետը, որ ես, որպէս Հայաստան-Թուրքիա կարգաւորման գործընթացի ներկայացուցիչ, պէտք է լինեմ անձեռնմխելի կամ անքննադատելի: Հակառակը, ես կարծում եմ, որ քննադատութիւնը եւ քննադատութեան իրաւունքը եւ հնարաւորութիւնը լաւագոյն բաներից է ինչ մեր հետ եղել է վերջին տարիներին, եւ հրաւիրում եմ բոլորին՝ քաղաքական եւ բովանդակային քննադատութեան ենթարկել թէ՛ մեր քաղաքականութիւնը, թէ՛ իմ քաղաքականութիւնը եւ գործողութիւնները, թէ՛ իմ համեստ անձը», Ազգային ժողովին մէջ իր արտահերթ ելոյթին ընթացքին ըսաւ Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան:



Հայակական կողմէն բանագնաց Ռուբէն Ռուբինեան

Դիմելով «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գեղամ Մանուկեանին՝ ան ըսաւ, որ իրենց քննարկումներու ցած որակը եւ նաեւ ընդհանրապէս այն փաստը, որ Ազգային ժողովը տեղ-տեղ դարձած է անիմաստ խօսակցութիւններու վայր ըլլալու հոմանիշ, այն է, որ իրենք չեն խօսիր ըստ էութեան եւ կը խօսին աղմկային տրամաբանութեամբ:

Ան նշեց, որ օրինակ՝ վերջին երկու օրերուն ընթացքին կը թուէր, թէ մեծ իրադարձութիւն տեղի ունեցած է այն առումով, որ տրուած է Հայաստան-Թուրքիա գործընթացին մեկնարկը, եւ կը թուէր, թէ պէտք է բովանդակային հարցադրումներ լսելու եւ ստանալին բովանդակային պատասխաններ, բայց հարցադրումներուն մեծ մասը եղած է այն, թէ ի՞նչ հիմքով ինք ներկայացուցիչ նշանակուած է:

Ան նաեւ ըսաւ, որ չի կրնար չանդրադառնալ ազդեցութեան գործակալներու թեմային, նշելով, որ իրեն համար մեր քաղաքական դաշտին կամ մեր պետութեան վերջին տասնամեակներուն գլխաւոր քաղաքական խնդիրը քաղաքական երեսպաշտութիւնն է:

Անդրադառնալով «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Ակնեսա Խամոյեանի երէկուան ելոյթին՝ Աժ փոխնախագահը ըսաւ.

«Ակնեսա Խամոյեանը երէկ փորձում էր ակնարկել, որ գուցէ ես թուրքական ազդեցութեան գործակալ եմ: Եւ ինձ մօտ հարց է յառաջնում, լաւ ինչպէ՞ս կարող է մի խմբակցութիւն, որի անդամներն մի մասը ՀՅԴ կուսակցութիւնից են, որն օրինակ՝ Յեղասպանութիւնից առաջ համագործակցութեան փաստաթուղթ է ստորագրել «Իթթիհատ վէ Թերաքքի» երիտ-

թուրքական ուժի հետ, մի ուժ, որն օրինակ ըստ Աստուածատուր Ասատուր Խաչատրեանի օրագրութեան, որի ներկայացուցիչները 1918 թուականին այցելել են Պոլիս, պատուիրակութեան կազմում եղել են Աւետիս Ահարոնեանը եւ Խատիսեանը եւ մասնաւորապէս, ըստ իմ մատնանշած օրագրութեան, ՀՅԴ ներկայացուցիչներն ասել են սուլթանին, որ Հայաստանն իր անկախութեամբ պարտական է Թուրքիային, մի ուժի, որի երկու ներկայացուցիչ 1919 թուականին եղել են մուսաւաթական Ատրպէյճանի կառավարութեան անդամներ՝ Խորհն Համասփիւււրը եւ Աբրահամ Դաստակեանը, մի ուժ, որի ներկայացուցիչ Վրացեանը, ըստ իր իսկ վկայութեան՝ 1921 թուականին դիմել է Քեմալական Թուրքիային՝ Ազգային մեծ ժողովի կառավարութեանը, ռազմական աջակցութեամբ, արդէն գանք մեր օրեր, մի ուժ, որը հետագայում դաշինքի մէջ է եղել կամ սատարել է Ռոպրթ Քոչարեանին, որի օրօք ընթացել են գաղտնի բանակցութիւններ՝ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ, ես ուզում եմ հասկանալ այն տրամաբանութեամբ, որով ձեր խմբակցութեան անդամները փորձում են ինձ միայն այն բանի փաստի բերումով, որ ես Հայաստան-Թուրքիա կարգաւորման գործընթացում Հայաստանի ներկայացուցիչն եմ, կասկած սերմանել կամ ակնարկել, որ ես Թուրքիայի ազդեցութեան գործակալ եմ, արդեօք այդ ուժերը 1918, 1919, 1921, 2003, 2004, 2005, 2006, 2007 թուականների այս գործիչներին կ'ակնարկէի՞ն, եթէ ապրէին այդ ժամանակներում», ըսաւ Ռուբէն Ռուբինեան:

Հայաստանն Ամերիկա-Ռուսական

Շարունակուած էջ 2-էն

տուութեան դաշտում է, որոնք իրապէս շահագրգռուած են Հայաստանի բաց եւ արդիական քաղաքակրթական զարգացման հեռանկարով, այլ ոչ թէ պարզապէս «խաղում» են այդ հեռանկարով

հետաքրքրուածութիւն:

Ի վերջոյ Հայաստանի այդ աշխատանքի յաջողութեան հեռանկարում է նաեւ Արցախի խնդրում հայկական քաղաքականութեան եւ Արցախի հայկականութեան կենսունակութեան բանալին:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Նորից Հին «Պլաստիկան» Են Միացրել

Շարունակուած էջ 2-էն

իրենց շարքերում փնտրել (երիտթուրքերի գործակալները մասին չի խօսքը), որ ամենամեծ գրան-

տակերները հէնց սրանց շարքերում են նստած: Փոխէք ձեր «պլաստիկան» (սկաւառակը խմբ.), լիք ուրիշ թեմաներ կան:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Հարցազրույց ՍԴՀԿ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի Ատենապետ ԸՆԿ. Սեպուհ Գալփաքեանի հետ

«Լիբանանը Սփիւռքի հայրենասիրութեան եւ մեր ազգային դատի հետապնդման մղիչ ուժն է: Հայաստանի պետականաշինութիւնը պէտք է ըլլայ մեր առաջնահերթ խնդիրը»

Հ. Ինչպե՞ս կարելի է ամփոփել ՍԴՀԿ Լիբանանի շրջանի վերջին երկու տարիներու գործունէութիւնը:

Պ.- Եթէ փորձենք ամփոփել վերջին երկու տարուան՝ 2020 եւ 2021, Լիբանանի շրջանի աշխատանքները, կրնանք միայն մէկ վերնագիր տալ՝ ընկերային ծառայութիւն եւ կարիքաւոր ընտանիքներու հոգատարութիւն, հայկական թաղամասերու ապահովութիւն եւ նման աշխատանքներ: Կարելի է ըսել, որ երկու տարիէ զրեթէ քաղաքական աշխատանքը սառած է, որովհետեւ երկիրը կը գտնուի քառուստի մէջ: Այսօր ոչ ոք կ'ուզէ իր սխալը ընդունիլ, իր յանցանքը ստանձնել, բոլորը կ'արդարանան եւ ուրիշը յանցաւոր կը համարեն, երբ բոլորը անխորհրդով են իրենց մեղքի ու յանցանքի բաժինը վերջին 30 տարիներու ընթացքին, միայն մէկ՝ տոկոսային տարբերութեամբ, ոմանք շատ եւ ոմանք քիչ:



Ի տես այս իրավիճակին, որպէս կուսակցութիւն այդ գործելաձեռնը որդեգրելէ ուրիշ ճար չկար: Յատկապէս 4 Օգոստոս 2020-ին Պէյրութի նաւահանգիստի հուժկու պայթուիչէն ետք, մենք որպէս կուսակցութիւն, եւ յարակից՝ մշակութային, երիտասարդական, բարեփոխական եւ մարզական միութիւններ, բոլորս ամբողջութեամբ կլանուեցանք աշխատանքի, որպէսզի ընդհանրապէս լիբանանահայուն եւ մասնաւորապէս հայկական թաղամասերուն մէջ բնակող հայուն կարիքները հոգայնք: Այստեղ պէտք է խոստովանիլ, որ մեր կուսակցութիւնը շատ փայլուն ձեւով կատարեց այս աշխատանքը, շնորհիւ դեկալարութեան, բայց մանաւանդ՝ շարքային երիտասարդ-երիտասարդուհիներուն, որոնք սիրալիցաբար եւ անձնուիրութեամբ ստանձնեցին այս աշխատանքը: Նաեւ պէտք է խոստովանիլ, որ այս աշխատանքները կարելի պիտի չըլլար յաջողցնել եթէ չունենայինք արտասահմանի շրջաններէն մեզի օժանդակող մեր քոյր կազմակերպութիւնները եւ անհատ բարերարներ, որոնք մինչեւ այսօր կը շարունակեն իրենց բարերարութիւնը, որպէսզի կարենանք գէթ ձեւով մը թեթեւցնել մեր ժողովուրդին դժուարութիւնները: Այս էր կուսակցութեան վերջին երկու տարուան գործունէութեան ծիրը, որովհետեւ Լիբանանի մէջ շատ ծանր պայմաններ են՝ ոչ լեկտրականութիւն, ոչ դեղորայք, ոչ վառելիքի կը բարդանայ ու կը ծանրանայ: Լիբանանեան թղթուկին անսանձ կ'արժեքըրկուի, անհատներու աշխատավարձերը վերածելով շատ չնչին՝ իրենց ապրուստի տարրական ծախսերուն համեմատած:

Հ. Լիբանանի շրջանը ինչո՞վ կը տարբերի միւս շրջաններէն:

Պ.- Լիբանանահայ գաղութի կարեւորութիւնը այս պահուն չէ որ պիտի ճշդենք: Լիբանանը, ինչպէս սովորութիւն է ըսել, Սփիւռքի բաբախող սիրտն է, հակառակ անոր որ հիմա քիչ մը դանդաղ կը բաբախէ, սակայն վստահ ենք, որ երբեք կանգ չ'առնեն: Հետաքրքրականօրէն ամէն ինչ կը սկսի Լիբանանէն եւ կ'աւարտի Լիբանանի մէջ: Լիբանանը զրեթէ միակ երկիրն է, ուր հայութիւնը ներգրաւած է տեղի քաղաքական կեանքին մէջ եւ իր իւրաքանչեւ ներկայութիւնն ու համբաւը ունի: Չմոռնանք լիբանանահայութեան եւ հաստատութիւններուն թիւը, ինչպէս նաեւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան Աթոռին ներկայութիւնը Անթիլիասի մէջ, այս բոլորը առանձնապատկութիւն կու տան Լիբանանին: Հակառակ վերջին 30-40 տարիներուն եւ նոյնիսկ անկէ առաջ երկիրն մէջ տեղի ունեցած պատերազմներուն ու անկայուն վիճակներուն, Լիբանանը կրցած է սերունդներ պատրաստել, որոնք այսօր Սփիւռքի գանազան գաղթօճախներուն մէջ դարձած են պատասխանատու եւ կարեւոր դիրքերու հասած անհատներ: Այս բոլորը կը փաստեն, որ Լիբանանի ներուժը շատ մեծ է, անշուշտ եթէ իր բնականօրէն վիճակին վերադառնայ: Հ. Ի՞նչ կը սպասէ լիբանանահայ գաղութին եւ ո՞ր կը տեսնէք անոր փրկութիւնը:

Լիբանանի փրկութեան հետ, որ այս պահուն երեւակայական է, ի տես քաղաքական լարուած իրավիճակին: Լիբանան չի կրնար վերականգնիլ այնքան ատեն որ կը շարունակուի առկայ մնալ պետութեան մէջ «աւելի զօրաւոր» պետութիւն մը, այնքան ատեն որ կայ պետական բանակին համագորբանակ ունեցող ուժ մը, որ Լիբանանը պատանդ վերցնելով զայն մխրձած է շրջանային պայքարներու մէջ, որոնք երբեք առնչակից չեն Լիբանանի հետ: Եթէ Լիբանան չապաքինուի, լիբանանահայութիւնն ալ կրնայ ժամանակի ընթացքին յոգնիլ եւ հիւժիւ: Մաղթենք, որ այդ վիճակին չհասնինք: Մինչ այդ պէտք է գօտինները ամրացնել եւ մարտահրաւէրները դիմակայել միասնական ճիգերով, որովհետեւ Լիբանանը Սփիւռքի հայրենասիրութեան եւ մեր ազգային դատի հետապնդման մղիչ ուժն է:

Ես կ'ուզեմ կոչ ուղղել մեր բարեկամներուն, մեր ընկեր-ընկերուհիներուն, ինչպէս նաեւ մեր համակիրներուն, ուր որ ալ անոնք գտնուին, որ չմոռնան Լիբանանը, չմոռնան որ այսօր Լիբանան զրկուած փոքր իսկ օժանդակութիւնը իր մեծ նշանակութիւնը ունի: Կը փափաքինք, որ բոլոր շրջանները, յատկապէս Միացեալ Նահանգներ, հոն ապրող լիբանանահայերը յատկապէս, մեզի գօրակցին: Հարկ է նշել, որ անցնող տարիներուն իրենց գօրակցութեամբ մենք կրցանք յառաջ շարժիլ, եւ այս առիթով կոչ կ'ուղղեմ, որ շարունակեն իրենց ձեռքը մեկնել, որպէսզի մենք ալ մեր հերթին մեր յանձնառութիւններուն տէր կանգնինք, որպէսզի Մայր կուսակցութիւնը Լիբանանի շրջանին մէջ գոյատեւէ եւ իր յարակից միութիւնները պատնէշի վրայ մնան, ինչպիսին են Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը, «Արարատ» օրաթերթը, ՀՄՄ-ը, ՀԿԲՄ-ը, Սահակեան-Լ. Մկրտիչեան Գոլէճը, երիտասարդական շարժումները, սկառուութիւնը: Այս բոլորը գոհողութիւն կը պահանջեն եւ մենք մեր ուժերով դժուար թէ դիմակայենք, ուստի կ'աղակալենք որ Լիբանանը սիրողները ընդառաջեն մեր կոչին:

Հ. ՍԴՀԿ-ը պիտի մասնակցի՞ Լիբանանի յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն:


Պ.- Նկատի առնելով, որ ՍԴՀԿ-ը քաղաքական կուսակցութիւն է, շատ տրամաբանական է, որ մասնակցինք երկիրն մէջ տեղի ունենալիք երեսփոխանական ընտրութիւններուն: 1992 թուականէն ի վեր կուսակցութեան որոշումն է մասնակցիլ բոլոր տեսակի ընտրութիւններուն, ըլլան անոնք երեսփոխանական, քաղաքապետական կամ այլ, եւ հետեւաբար 2022-ի Մայիսին նախատեսուած խորհրդարանական ընտրութիւններուն Հնչակեան կուսակցութիւնը անպայմանօրէն իր մասնակցութիւնը պիտի բերէ բոլոր ընտրաշրջաններուն մէջ, ուր հայկական ներկայացուցիչի աթոռ գոյութիւն ունի: Նշենք, որ կուսակցութիւնը արդէն իսկ սկսած է իր նախընտրական աշխատանքները, սակայն հոս կ'ուզեմ մատնանշել, թէ կրնա՞նք վստահ ըլլալ, որ այդ ընտրութիւնները անպայմանօրէն տեղի պիտի ունենան: Այդ հարցին տակաւին կասկածանքով կը մօտենանք, որովհետեւ բոլորս ալ լաւ գիտենք, որ Լիբանանի իշխանութիւններուն կրնայ երբեք ձեռնադրուել իր իրավունքները, եւ մեր մտավախութիւնը այն է, որ եթէ երբեք իշխող համակարգը զգայ, որ կրնայ կորսնցնել ներկայացուցչութիւններու որոշ թուաքանակ մը, կրնայ ամէն հնարքի դիմել որպէսզի այդ ընտրութիւնները չեղան: Այդուհանդերձ, կը կրկնեմ, որ ՍԴՀԿ-ը պատրաստ է եւ անպայմանօրէն պիտի մասնակցի ընտրութիւններուն:

Հ. Իսկ արդեօք պա՞րզ է, թէ կուսակցութիւնը որ քաղաքական ուժիմ հետ պիտի դաշնակցի այս ընտրութիւններուն:

Պ.- Այս պահուն տակաւին յատկա չէ եւ կ'աշխատինք որ յառաջիկայ ամսուան ընթացքին, վերջնական եզրակացութեան գալչեաք, յայտարարենք այդ մասին: Բայց կրնամ ըսել, որ հայկական իմաստով որեւէ միասնական դաշինք տեղի պիտի չունենայ, որովհետեւ նախեւառաջ ընտրական նոր օրէնքով ձեռնադրու չէ, որ հայկական կուսակցութիւնները միասին նոյն ցանկին մէջ ըլլան: Առաւել եւս, 2018-ի խորհրդարանական ընտրութիւններու մեր փորձառութիւնը մեզ կը թելադրէ, որ նման քայլի չդիմենք, որովհետեւ այդ փորձը մեզի ցոյց տուաւ, որ ոմանք տակաւին միասնականութեան իմաստը չեն ըմբռնած եւ միասնականութիւնը բաւարար չեն ըմբռնած: Այս իր պատճառները ունի եւ նոյն տեղը կը տանի. ոմանք տարիներու ընթացքին չկրցան ըմբռնել, թէ ինչ կը նշանակէ հայ քաղաքական կուսակցութիւններու միասնականութիւն, զայն շփոթեցին միահեծանութեան հետ, կարծելով որ ամէն բան միշտ ի շահ իրենց պիտի մնայ: Հ. Ինչպե՞ս կը դիտէք ու կը գնահատէք Հայաստանի քաղաքական կեանքը: Եւ ինչպե՞ս կը տեսնէք անոր ապագան:

Խօսք Երիտասարդութեան (Ընկեր Սարգիս Տխրունիի Լահատակութեան 93-րդ Տարելիցին Առիթով)

Կեանքը յարափոփոխ է: Անհատական թէ հաւաքական գետնի վրայ, կացութիւնները կը պարտաւորեցնեն յարմարիլ ժամանակին, ճկունօրէն պատշաճիլ նորայայտ իրավիճակներու դիմաց: Պայմանները կը թելադրեն խոհեմութիւն եւ աշխրջութիւն: Յարաշարժ մեր կեանքը պարտաւոր ենք ընկալել այնպէս՝ ինչպէս որ է:



Սարգիս Տխրունի մէջն է: Եղէք խիզախ, յանդուգն, յանձնապաստան եւ անվեհեր:

Այս օրինաչափութեան եւ տրամաբանութեան հոլովոյթին ի տես, սերնդափոխութիւնը անխուսափելի եւ անժխտելի երեսն է հասարակական ու ընկերային կեանքին: Եւ հետեւաբար՝ հա սակ նետող երիտասարդութիւնը իր խօսքն ու գործը ունի կատարելիք: Սերնդափոխութեան դրօշակը արդէն իսկ յանձնուած է այն սերունդին, որ վերջին տասնամեակներուն ակնատեսն եղաւ կեանքի արմատական փոփոխութեանց, յարաճուն եղափոխութեանց եւ երբեմն յեղաշրջումներու:

Սոյն սրտբաց մտորումներուն առիթ տուող դրդապատճառը մեծ ուսուցիչ ու դաստիարակ Սարգիս Տխրունիի նահատակութեան հերթական տարելիցն է: Ան, որ Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ խանդաբորբ ոգեւորութեամբ եւ գաղափարական աւելնով արտայայտիչը եղաւ հայրենասէր ու յանձնառու երիտասարդութեան իղձերուն: Իր ապրած եւ գործած ժամանակը խիստ յուսահատական էր, հայոց երկիրքը մոռայլած, կեանքի ու վերապրումի նշոյլները աղօտ, խլիճներու ուշակորոյս բազմութիւն մըն էր յետեղեռնեան հայրութիւնը: Կարիքը կար երիտասարդական եւ յառաջադէմ ձայներու:

Երէկ կը մտմտայինք եւ կ'ըսէինք՝ ճամբայ բացէ՛ք երիտասարդութեան, իսկ այսօր կ'աղաղակենք՝ դո՛ւք՝ երիտասարդներ, ստանձնեցէ՛ք եւ տէրն եղէ՛ք ազգային մեր արժէքներուն, ընկերային եւ հասարակական կեանքին. դուք առաւել կը հասկնաք եւ կ'ըմբռնէք մերօրեայ հարցերը, դո՛ւք կրնաք տեսնել եւ քայլ պահել օրուան արեւոտեմներուն հետ, նաւակարել կեանքին եւ ընկերութեան մակոցկը: Դուք պիտի գրոհէք հոն՝ ուր պէտք է, դուք պիտի կողմնորոշուիք այնպէս՝ ինչպէս որ կը դատէք: Այսօրը ձերն է, արեւածագը ձեզի համար է, ապագան ձեր

Եւ ահա Ս. Տխրունի եղաւ փարոս մը իր օրին, որուն շուրջ նորափթիթ տարրեր ստացան հայրենասիրական եւ ընկերվարական աւել ու առողջ ուղղութիւն: Կերպով մը, ան հրեղէն օղակը դարձաւ ընկճուած բազմութեան եւ նորածիլ ընձիւղներու միջեւ եւ ազդարարեց ահագանգը սերնդափոխութեան՝ իր ապրած գործ օրերուն:

Սերնդափոխութեան հրամայական երեւոյթը, ի հարկէ, կը վերաբերի ընդհանուրին. իսկ այս պարագային՝ ի մասնաւորի գաղափարական երիտասարդութեան եւ շեշտակիօրէն՝ հնչակեան երիտասարդութեան: Ս. Տխրունի, 17 Յունուար 1929-ին, իր նահատակութեամբ, ուղի բացաւ անհասխնդիր հայրենասիրութեան, հնչակեան երիտասարդական դպրոցին, որուն սկզբունքները եղան ու մնացին նուիրումն ու ծառայութիւնը երեք նուիրական արժէքներու՝ հայրենիք, ընկերվարութիւն եւ մարդասիրութիւն: Ան իր արիւնով ոռոգեց այն ճանապարհը որ կը դաւանէր՝ «Հոն, Արարատի փէշերուն պիտի գարնենք մեր վրբանները»: Եւ ահա այդ իսկ պատճառով հնչակեան երիտասարդական միաւորները Լիբանանի եւ Սուրիոյ մէջ կրեցին անունը Տխրունիի՝ ի յիշատակ աննկուն ու անկտորում մարտիկ եւ ուսուցիչ Ս. Տխրունիի:

Ներկայութիւն դարձաւ հնչակեան այն օղակը, որ գաղափարական շունչ եւ միտք փոխանցեց հաւատաւոր երիտասարդներու: Նոր դպրոց մըն էր այս՝ որուն շարքերէն սողանցող սղաք ու աղջիկներ կան համալրելու Տխրունիի սկսած ազգային-հայրենասիրական երթը: Սիրելի երիտասարդներ, այս տարի նշող Տխրունիականութեան 70-ամեակը թող ըլլայ հանգրուան մը նոր սկիզբի, մեկնակէտ մը առաւել եռանդի ու կիրքի: Բաց է ճանապարհը ձեր առջեւ: Մի՛ տատանիք եւ մի՛ վարանիք ձեր դաւանանքին դիմաց, որովհետեւ ան դպրոցն է անկաշառ հայրենասիրութեան եւ անմնացորդ նուիրումի:

Յարափոփոխ այս կեանքին մէջ, ահա դուք պիտի նետուիք վճռակա՛նօրէն, քանի յեղջեղուկ եւ լպրծուն գետինները, կարգախօսները եւ պղպջակի նմանող խօսքերը իսթուսիկ են ու անցողիկ: Մինչ գաղափարականութիւնը աներբը ապառաժի նման կը կերտէ կեանքի մրրիկներուն տոկացող մարդն ու երիտասարդը: Ա՛յս սորվեցուց Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան երիտասարդական դպրոցը՝ Տխրունիականութիւնը:

Երիտասարդներ, խունկ ու աղօթք նահատակ ղեկավարի յիշատակին: Ապա՛ ուխտի վերանորոգում հնչակեան սկզբունքներուն: Որմէ ետք՝ ի գործ՝ յանուն Տխրունիական սկզբունքներուն, աւանդներուն եւ 70-ամեայ ժառանգութեան:

Ա՛յս է օրուան հրամայականը: Ընթացէ՛ք առաջ, շարունակեցէ՛ք մեր երթը, ձեր գործը արդար է եւ ազգահաճոյ, քանզի նպատակն է նուիրական եւ հաւատքը՝ անսասան:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹ

Հայոց Ցեղասպանութեան Հարցին Շուրջ

Շարունակուած էջ 1-էն

Այն դիտարկման, թէ այնուամենայնիւ այս հարցով որոշակի տարբերութիւններ եղած են նախորդած երեք իշխանութիւններուն օրօք. Տէր Պետրոսեանը կ'ըսէր՝ «Դա փաստ է, չենք քննարկում», Քոչարեանը կը փորձէր միջազգային օրակարգ հարցը բերել, Սերժ Սարգսեանի օրօք ալ ցիւրիխեան արձանագրութիւններով պատմաբաններու յանձնաժողովին Երեւանը համաձայնութիւն տուաւ, եւ հարցումին, թէ ներկայիս իշխանութեան մօտեցումը ո՞րն է Հայոց ցեղասպանութեան հարցով, Ռուբինեան պատասխանեց. «Նախ ցիւրիխեան փրօթոքընթրում Ձեր ձեւակերպած ձեւով չէր, մի փոքր այլ ձեւակերպում էր, եւ երկրորդը՝ մեր դիրքորոշումը

հետեւեալն է, ընդ որում մեր դիրքորոշումն առանձնապէս չի տարբերում նախորդ իշխանութիւններէ դիրքորոշումից այս առումով, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը նախապայման չէ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների կարգաւորման գործընթացում: Երբ որ մենք ասում ենք, որ մենք պատրաստ ենք կարգաւորել յարաբերութիւնները առանց նախապայմանների, դա բառիս բուն իմաստով նշանակում է՝ առանց նախապայմանների, եւ մենք ակնկալում ենք, որ նոյնանման մօտեցում պէտք է լինի Թուրքիայից, որովհետեւ դա է ճանապարհը յառաջ գնալու»: Ռուբինեան միեւնոյն ժամանակ շեշտեց՝ Հայաստանի Հանրապետութիւնը երբեւիցէ որեւէ տարածքային պահանջ չէ ներկայացուցած Թուրքիոյ:

Պոլսահայերը Ուրախ Են

Շարունակուած էջ 1-էն

համավարակի պայմաններուն մէջ», - «Արմենիա»-ն ըսած է Պոլսահայ յայտնի երգչուհի Սիպիլը՝ շեշտելով, որ կ'ակնկալէ, որ օգուղային ընկերութիւնը պահէ մատչելի գիները, իսկ թուիչները կ'իրականան օրուան յարմար ժամերուն: «Պոլսահայերը առիթ պիտի ունենան աւելի յաճախ Հայաստան այցելելու. այս առիթէն կ'օգտուին նաեւ իսլամացած հայերն ու այն

թուրքերը, որոնք հետաքրքրուած են հայկական մշակոյթով: Այդ մէկը ձեռնտու կ'ըլլայ հայաստանեան զբօսաշրջութեան համար, յատկապէս յետհամավարակային շրջանին», - աւելցուցած է Սիպիլը: Պոլսահայ համայնքի մէկ այլ ներկայացուցիչ՝ Լերնա Պալքէջը Օզտէրը նոյնպէս յայտնած է որ, ուրախութեամբ լսած է լուրը: «Կը կարծեմ, որ շատ ուրախալի է, որ այդ ընկերութիւնը «Flyone Armenia»-ն է», - ըսած է Օզտէրը:

Հայ-Թրքական Բանակցութիւններ

Շարունակուած էջ 1-էն

կարգաւորմամբ եւ սահմանի բացումով Հայաստան դուրս կու գայ շրջափակումէն եւ նոր հեռանկարներ կը բացուին անոր առջեւ՝ գարգացնելու տնտեսութիւնը եւ հասնելու առեւտուրի նոր շուկաներ, իսկ Թուրքիա աւելի լայն կապ կ'ունենայ իր դաշնակից Ատրպէյճանի հետ: Կարգ մը մեկնաբաններ աւելի հեռուն երթալով՝ Հայ-թրքական բանակցութիւններու յաջողութեան մէջ կը տեսնեն Հայաստանի կողմէն ներս Ռուսաստանի դիրքերու թուլացումը:

Յօդուած 2. Ներքոյիշեալ ուղղութիւնն ունեցող սահմանագիծը բաժանում է Օսմանեան կայսրութիւնը Վրաստանից, Հայաստանից եւ Ատրպէյջանից: Սահմանը սկսում է այն կէտում, որտեղ ձորոխ գետը թափում է Սեւ ծովը եւ մինչեւ Շաւնաբադ սարը միաձուլուած է հին սահմանի հետ, որ գոյութիւն ունէր Օսմանեան կայսրութեան ու Ռուսաստանի միջեւ մինչեւ 1877թ. պատերազմը: Անցնելով լեռնագագաթների գծով՝ այն հասնում է Խալիսաբադի սարերին (1856թ. սահմանով), ապա թեքում դէպի հարաւ, անցնում Փիրսաղաղի գագաթով՝ Աբասթումանից 2 քմ հարաւ, եւ թեքելով դէպի հիւսիս-արեւելք հասնում է Կարխուլղաղի գագաթ, այստեղից ուղղում նախ 5 քմ դէպի հիւսիս-արեւելք ու ապա դէպի հարաւ-արեւելք՝ հասնում է Գուրկել վայրը, անցնում Քուռ գետի վրայով՝ Աձղուրից 2 քմ հարաւ, եւ անցնելով Ղաչաբաշի, Օրթաթափա սարերի գագաթների գծով՝ հասնում է Տաբաթուրի լիճը՝ Մոլիտի վանքից անմիջականօրէն հարաւ: Սահմանն այդ լիճը կտրում է այնպէս, որ օսմանեան տարածքում է մնում լճի մի մասը, որը գտնուած է հարաւում՝ ուղիղ գծով, որ Մոլիտի վանքի հարաւից անմիջականօրէն գնում է մինչեւ լճի հիւսիսային վերջաւորութիւնից մէկուկէս քմ հարաւ-արեւելք՝ հակադիր փին գտնուող կէտը, եւ հասնում Թաւկոտեղի սարը: Այսուհետեւ այն իջնում է դէպի հարաւ, անցնում Շաւնաբադ, Կարազուզու, Սամսար սարերի գագաթներով եւ թեքելով դէպի արեւելք՝ անցնում է Դեկեկիրան լեռնաշղթայի գագաթներով, ապա ուղղում է դէպի հարաւ՝ անցնելով Աչրիքար, Բաշկիրան, Նուրուհան սարերի գագաթներով: Նուրուհան սարից յետոյ այն շարունակում է գնալ հարաւային ուղղութեամբ եւ շարունակ անցնելով լեռնագագաթների գծով՝ հանդիպում է Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղագծին՝ Աղբուլաղ բնակավայրից 5 քմ արեւմուտք. այստեղ այն անցնում է լեռնագագաթներով մինչեւ Խանվալի վայրը, որտեղից համարեա ուղիղ գծով հասնում է Ալազաղ լեռան ամենաբարձր գագաթը եւ, գնալով ուղիղ գծով, հասնում է Էջմիածին-Սարդարապատ խճուղին՝ Էջմիածնից 7 քմ արեւմուտք գտնուող կէտում, ապա շրջանցում է Էջմիածինը 7 քմ տարածութեան վրայ եւ շարունակում է Ալեքսանդրապոլ-Չուլֆա երկաթուղուն զուգահեռ ուղղութեամբ՝ մնալով նրանից մօտ 6 քմ, իսկ Բաշկիրան վայրից դէպի հարաւ-արեւմուտք՝ 16 կմ հեռաւորութեան վրայ, հասնում է այդ վայրից դէպի երկաթուղուն տանող ճանապարհը, ապա թեքում դէպի հարաւ-արեւելք, անցնում Աշաղը Ղարաբաղլար գիւղի մօտով՝ 1 քմ հարաւ, եւ Շահաթլու, Ղարախաշի, Աշաղը Չանախաշի բնակավայրերի վրայով հասնում է Էլփինչազ գետը, որով գնում է մինչեւ Արփա բնակավայրը. ապա մտնում է Արփաչայի հովիտը, հասնում է Ղաչալու բնակավայրը ու Ղաիդ գետով գնում է Աղթաբան սարի գագաթը, ապա անցնում Ղարադուրնա, Ղարանլիս սարերի գագաթներով, հասնում Ռեանլաչայ գառիթափը, շարունակում է այդ գետի հովիտով Ագա բնակավայրի հարաւային կողմից հասնելով Ալիդելի բնակավայր, որ գտնուած է նախկին ռուս-պարսկական սահմանագծի վրայ:

Սահմանագծի վերջնական որոշումը կը կատարուի հենց տեղում՝ երկու կողմերի անդամներից կազմուած յանձնաժողովի կողմից:

Յօդուած 3. Հայաստանի եւ Ատրպէյջանի կառավարութիւններին միջեւ կնքուած փոխադարձ սահմանների որոշման վերաբերող համաձայնագիրը կը հաղորդուի Օսմանեան կայսերական կառավարութեանը:

Յօդուած 4. Օսմանեան կայսերական կառավարութիւնը պարտաւորուած է գէնքի ուժով օգնութիւն ցոյց տալ Հայաստանի կառավարութեանն այն դէպքում, եթէ վերջինն այդ օգնութիւնը խնդրի նրանից՝ երկրում կարգն ու հանգստութիւնն ապահովելու համար:

Յօդուած 5. Հայաստանի կառավարութիւնը պարտաւորուած է գործուն կերպով հակադրել, որպէսզի ոչ մի հրոսակախումբ չկազմաւորուի եւ չգինուի իր տարածքի սահմաններում, ինչպէս եւ գինաթափել ու ցրել բոլոր հրոսակախումբերը, որոնք կը փորձեն թաքնուել այնտեղ:

Յօդուած 6. Հայաստանում ապրող մուսուլմանների կրօնն ու սովորոյթները կը յարգուեն: Նորին կայսերական մեծութիւն սուլթանի

Հայաստան-Թուրքիա Հաշտութեան Փորձերը Առաջին Հանրապետութեան Տարիներուն

Շարունակուած էջ 13-էն

անունը կ'արտասանուի մուսուլմաններէ հանրային աղօթքներում: Նրանք կ'օգտուեն նոյն քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներէ, ինչ եւ ուրիշ կրօններէ պատկանող քաղաքացիները: Մահմետականները կարող են սովորել իրենց մայրենի լեզուով եւ իրենց կրօնի լեզուով:

Կրօնական պաշտամունքի եւ բարեգործութեան կատարումն ապահովելու նպատակով կարող են ստեղծել մուսուլմանական բարոյական օրգաններ, որոնք լիազօրուած կը լինեն կառուցել մզկիթներ, հիւանդանոցներ, դպրոցներ, կրօնական ու բարեգործական հիմնարկներ եւ դրանց պահպանութեան համար ձեռք բերել շարժական ու անշարժ գոյք: Դրանք կը կառավարուեն յատուկ կառավարիչներէ կողմից:

Գլխաւոր մուֆթին կը նստի Երեւանում՝ Հայաստանի մայրաքաղաքում, իսկ միւս մուֆթիները կը բնակուեն հանրապետութեան այն վայրերում, որտեղ նրանց գտնուելը կը համարուի անհրաժեշտ:

Այս մուֆթիներէ յարաբերութիւնները Շեյխ-ուլ-Իսլամութեան հետ, ինչպէս եւ նրանց իրաւունքներն ու պարտականութիւնները, սահմանուած են այս դաշնագրին կցուող համաձայնագրում:

Յօդուած 7. Նկատի ունենալով, որ Օսմանեան կայսրութեան եւ Հայաստանի միջեւ որեւէ դաշնագիր, պայմանագիր, համաձայնագիր, ակտ, հրահանգ եւ այլ միջազգային փաստաթուղթ գոյութիւն չունի, երկու պայմանաւորուող կողմերը համաձայնեցին կնքել հիւպատոսական կոնվենցիա, առեւտրական պայմանագիր եւ այլ ակտեր, որոնք անհրաժեշտ կը համարեն իրենց իրաւաբանական եւ տնտեսական յարաբերութիւնները կարգաւորելու համար: Հիւպատոսական կոնվենցիան կը կնքուի երկու տարուայ ընթացքում՝ սոյն տրակտատի վաւերացումից եւ փոխանակումից անմիջապէս յետոյ:

Այդ անցման ժամանակաշրջանում գլխաւոր հիւպատոսները, հիւպատոսներն ու փոխհիւպատոսները համապատասխանաբար կ'օգտուեն նրանց արտօնութիւնների ու պաշտօնների նկատմամբ առաւել բարենպաստող ազգի դրութիւնից, ընդհանուր միջազգային իրաւունքի հիման վրայ, փոխադարձութեան սկզբունքներով:

Ընդհանուր միջազգային իրաւունքի հիման վրայ առեւտրական պայմանագիր կնքելու համար բանակցութիւնները կը սկսուեն այն բանից անմիջապէս յետոյ, երբ ընդհանուր հաշտութիւն կը կնքուի, մի կողմից՝ Թուրքիայի եւ միւս կողմից՝ նրա հետ պատերազմի մէջ գտնուող պետութիւնների միջեւ: Մինչ այդ, յամենայնդէպս մինչեւ 1919թ. Դեկտեմբերի 31-ը, սոյն պայմանագրի յաւելուածով սահմանուած ժամանակաւոր դրոյթը կը կիրառեն երկու կողմերն էլ: Այն կարող է չեղեալ յայտարարուել՝ սկսած 1919թ. Յունիսի 30-ից, եւ ուժի մէջ կը մտնի վեց ամսից յետոյ:

Յամաքային հաղորդակցութիւնը կը սկսուի սոյն պայմանագրի վաւերացումից ու փոխանակումից յետոյ:

Յօդուած 8. Կողմերը պարտաւորուած են փոխադարձաբար թոյլ տալ ամէն հնարաւոր թեթեւացում երկաթուղային տրանսպորտի նկատմամբ, սահմանելով եւ կիրառելով իջեցուած տարիֆներ: Մասնաւորապէս, երկաթուղիների կառուցման, շահագործման ու պահպանման կամ ամէն տեսակի հասարակական աշխատանքների համար անհրաժեշտ նիւթերի տեղափոխման նկատմամբ կը կիրառուեն յատուկ իջեցուած տարիֆներ:

Կողմերի միջեւ երկաթուղային գծերի շարժակազմի փոխանակումը կը կատարուի այդ հարցի վերաբերեալ սահմանուած միջազգային սկզբունքներով:

Հարցազրոյց Ընկ. Սեպուհ Գալփաքեանի Հետ

Շարունակուած էջ 6-էն

Իր իշխանութեան օրօք նման բան տեղի չունենայ, որպէսզի չստիպուին գրաւեալ հողեր վերադարձնել, բայց արդիւնքը դուրս եկաւ որ հակառակորդը իր քայլը ի գործ դրաւ ի՛ր ուժեղագոյն եւ մեր ամենաթույլ պահուն: Հետեւաբար, գին մը կայ վճարեցինք եւ թերեւս տակաւին վճարենք, բայց այդ վճարման պատասխանատուն այսօրուան իշխանութիւնները չեն երբեք, ոչ ալ վարչապետ Փաշինեանն է: Այս չի նշանակեր, որ մենք ամբողջութեամբ կը զօրակցինք կամ կը բաժնենք Փաշինեանի աշխատանքը, մեր կուսակցութեան դիրքորոշումն է ամէն ինչին տալ իր յարմար գնահատականը: Սակայն Հայաստանի մէջ կայ չափազանց լարուածութիւն, պէտք է լաւ գիտնանք ինչ է իշխանութիւն եւ ինչ է ընդդիմութիւն, փորձելով աւելի շինել ու կառուցողական ձեռով աշխատել: Այս վիճակը եւ Ազգային ժողովէն ներս տիրող մթնոլորտը անընդունելի են մեզի համար: Ուստի, կը մաղթենք, որ բոլոր թնճուկները

վերջնականապէս լուծուին, որպէսզի մեր ապագայի քայլերը ճշդենք եւ մեր հայրենիքի վերընձիւղման աշխատանքները շարունակենք:

Ինչ կը վերաբերի Հայաստանի ապագային, մենք կը շեշտենք, որ Հայաստանի պետականաշինութիւնը պէտք է ըլլայ մեր առաջնահերթ խնդիրը, որպէսզի ամէն անգամ, որ փորձանք մը պատահի կամ իշխանափոխութիւն տեղի ունենայ, ստիպուած չըլլանք գերոյն սկսիլ: Ամուր հիմքերու վրայ պետութիւնը, հզօր բանակը, դատական արդար համակարգը եւ ընկերային արդարութիւնը պէտք է ըլլան գերիշխող: Պէտք է զգացական մօտեցումներէ հեռու մնանք, որպէսզի կարենանք առանց բարդոյթի մեր դրացիներուն հետ վերջնական համաձայնութիւններ կնքել, անշուշտ առանց գիշումներու՝ էական հարցերու մէջ: Հարկաւոր է նաեւ, որ յառաջիկայ տարիներուն Հայաստանի մէջ ձեւաւորուի խորհրդարանական նոր ընդդիմութիւն, որ ըլլայ կառուցողական եւ կատարէ վերահսկողական դեր ու չնմանի այսօրուան հիւանդ եւ

կողմերն անյապաղ կը մտնեն բանակցութիւնների մէջ՝ նախորդ դրոյթների մանրամասնութիւնները որոշելու համար:

Յօդուած 9. Մինչեւ Հայաստանի՝ Միջազգային փոստ-հեռագրական միութեան մէջ մտնելը, Օսմանեան կայսրութեան եւ Հայաստանի միջեւ փոստային ու հեռագրական կապերը կը վերականգնուեն սոյն պայմանագրի վաւերացումից ու փոխանակումից յետոյ՝ Միջազգային միութեան փոստային ու հեռագրական կոնվենցիաների, համաձայնագրերի ու ռեզլամենտների կանոնադրութիւններով:

Յօդուած 10. Պայմանաւորուող կողմերից մէկի տարածքի բնակիչներն ու համայնքները, որոնք ունեն սեփականութեան եւ օգտագործման իրաւունք սահմանի միւս կողմում գտնուող անշարժ գոյքի նկատմամբ, կարող են օգտագործել դրանք, շահագործել կամ վարձակալութեան տալ, վարել կամ վաճառել անձամբ կամ վստահուած անձանց միջոցով:

Ոչ ոք չի կարող զրկուել այդ անշարժ գոյքի նկատմամբ իրեն պատկանող սեփականութեան իրաւունքից այլ կերպ, քան նկատի ունենալով հասարակական շահը եւ միշտ՝ փոխհատուցմամբ:

Ոչ մի արգելք չպէտք է չարուցուի բնակիչներին կամ նշուած համայնքների ներկայացուցիչներին, երբ նրանք սահմանը կ'անցնեն՝ ներկայացնելով ճանապարհային թղթիկները, որոնք կը տրուեն ըստ բնակավայրի՝ համապատասխան իշխանութիւնների կողմից եւ որոնք կ'օրինականացնեն միւս կողմի իշխանութիւնները:

Թեթեւացումներ եւ յատուկ արտօնութիւններ կը տրուեն սահման անցնելու եւ սահմանային բնակավայրերում առեւտուր անելու համար: Նախորդ դրոյթների մանրամասնութիւնները կը կարգաւորուեն ըստ սոյն պայմանագրի 11-րդ յաւելուածի:

Յօդուած 11. Հայաստանի կառավարութիւնը պարտաւորուած է գործադրել բոլոր ջանքերը, որպէսզի սոյն պայմանագրի ստորագրումից յետոյ Պաքու քաղաքից անյապաղ դուրս բերուեն բոլոր հայկական զինուորական ուժերը, ինչպէս եւ ապահովել, որ գործընթացը առիթ չտայ որեւէ ընդհարման:

Յօդուած 12. Բրեստ-Լիտովսկում Օսմանեան կայսրութեան ու նրա դաշնակիցների եւ Ռուսաստանի միջեւ կնքուած հաշտութեան ընդհանուր եւ լրացուցիչ պայմանագրերի դրոյթները, որքանով որ դրանք չեն հակասում ներկայ պայմանագրին, ուժի մէջ են կողմերի համար:

Յօդուած 13. Սոյն պայմանագրով որոշուող տարածքների սահմաններից դուրս գտնուող գործերը դուրս կը բերուեն պայմանագրի կնքումից յետոյ:

Յօդուած 14. Սոյն պայմանագիրը կը վաւերացուի, եւ վաւերացուած օրինակների փոխանակումը կը կատարուի Կ. Պոլսում, մէկ ամսուայ ընթացքում եւ կողմ աւելի վաղ, եթէ դա հնարաւոր կը լինի: Նա ուժի մէջ կը մտնի փոխանակման օրից:

Ի հաստատումն սրա՝ լիազօրուած անձինք ստորագրեցին հաշտութեան ու բարեկամութեան սոյն պայմանագիրը եւ դրեցին իրենց կնիքները: Ստորագրեցին՝ Խայրի, Վեհիբ, Ալ. Խատիսեան, Յովհաննէս Քաջազունի, Մ. Պապաշանեան

4 Յունիս, 1918թ., Պաթում

Ծանօթագրութիւն. փաստաթղթի բնագրում Խատիսեանի ազգանունը գրուած է Խատիսով, Քաջազունու անունը՝ Ռուբեն, Պապաշանեանի ազգանունը՝ Պապաշանով:

մաղձով լեցուն ընդդիմութեան: Այս բոլորը անհրաժեշտ են, որպէսզի մենք վստահ ըլլանք հայրենիքի ապագայով:

Հ. 2022-ին ինչպէ՞ս կը պատրաստուիք Գլխավոր կուսակցութեան յոբելեանական 135-ամեակը:

Պ. - Մեզի համար ամեակները ընդհանրապէս հաշուեցարդարի առիթ են, ինչպէս նաեւ առիթ մըն է վերաբեռնորելու մեր կատարած աշխատանքները: Դժբախտաբար, այս տարի 135-ամեակը կու գայ քիչ մը տխուր մթնոլորտի մէջ: Կրնանք ըսել, որ 130-ամեակէն մինչեւ հիմա շատ բան փոխուած է հայ ժողովուրդի կեանքին մէջ: Մենք անշուշտ կ'ուզենք կուսակցութեան 135-ամեակը եւ ընդհանրապէս ամեակները փառաշուքօրէն նշել, որովհետեւ մեր եւ մեր ժողովուրդին իրաւունքն է այդ, որովհետեւ ամեակները առիթ են, որ ժողովուրդին բացայայտենք մեր կատարած աշխատանքը՝ ի փառս մեր ժողովուրդին: Դժբախտաբար, 2022-ը կրնայ ըլլալ շատ պատեհ առիթներ չստեղծէ, որ մենք կարենանք արժանապատիւ ձեռով նշել այս ամեակը, սակայն մենք կը կարծենք, որ շրջանները յատուկ միջոցառումներով անպայմանօրէն, թէկուզ սահմանափակ ներկայութեամբ, ձեռնարկներ պիտի կազմակերպեն: Բայց մեզի համար շատ

կարեւոր է, որ 135-ամեակի գլխաւոր՝ եզրափակիչ հանդիսութիւնը տեղի ունենայ հայրենի հողին վրայ:

Յիշեցնենք, որ 2022 տարին նաեւ կը զուգարդիպի մեր կուսակցութեան համագումարի կալցման թուականին: Հետեւաբար, ՄԻՉԿ Կեդրոնական վարչութիւնը, շրջաններուն հետ միասնաբար, այդ համագումարի օրերուն վստահաբար առիթ պիտի ստեղծէ, որ մենք Հայաստանի մէջ կատարենք մեր եզրափակիչ հանդիսութիւնը, որու ընթացքին լուսարձակի տակ առնուի 135-ամեայ փառապանծ Մայր կուսակցութեան կատարած սխրագործութիւնները, փայլուն պատմութիւնը եւ մեծ թիւով նահատակները, որոնք զոհուած են յանուն հայրենիքին եւ յանուն հայ ժողովուրդի փրկութեան ու գոյատեւման: Այստեղ նաեւ հարկ կը զգամ կրկնել այն հանգամանքը, որ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը ժողովուրդին ծոցէն ծնունդ առած, ժողովուրդին ցաւերով տոգորուած, ժողովուրդին բարօրութեան նուիրուած կուսակցութիւն մըն է: Մենք պատիւով կ'ըսենք ու կը կրկնենք միշտ, որ մեր կուսակցութիւնը երբեք, երբեք իր ժողովուրդին հանդէպ դոյզն անգամ չէ սխալած:

Հարցազրոյցը վարեց՝ ԼԻՒՍԻ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

Առնօ Բաբաջանեանը եւ «Յորժամ» Հոգեւոր Մեղեդին



ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Մէկ ամիս առաջ լրացաւ հանձարեղ երգահան եւ դաշնակահար Առնօ Բաբաջանեանի ծննդեան 100-ամեակը: Այդ կապակցութեամբ ես մի ծաւալուն յօդուածով կարելոյն չափով փորձեցի սեղմ գծերի մէջ արժեւորել համաշխարհային ճանաչման արժանացած ՄԵՄ հայորդու կեանքն ու գործունէութիւնը:

Այդ յօդուածում ես զանց էի առել կոմպոզիտորի կեանքի եւ ստեղծագործական հանճարի լուսաբանման մի դրուագ, որի մասին խոստացայ առանձին անդրադառնալ: Խօսքը Բաբաջանեանի կողմից մշակուած «Յորժամ» («Հորժամ», - երբ, այնժամ - Հեն. Անասեան) հոգեհանգստեան երգ-մեղեդու մասին է, որը կարծեօք մոռացութեան է տրուած Բաբաջանեանի մասին որեւէ հեղինակային գրառման մէջ:

Ինքնին հասկանալի է, որ Աթեհզմի (Անաստուածութիւն) գաղափարներով առլի Խորհրդային երկրում ոչ մի երաժշտագետ չէր համարձակուի ակնարկ անգամ անել նրա կողմից մշակուած հոգեւոր երգի մասին:

Ահա եկել է յարմար պահը, Յունուարի 22-ին Առնօ Բաբաջանեանի ծննդեան 101-րդ տարեդարձի օրն է: Ուրեմն այս յօդուածը թող կրկին յիշեցնի Հայաստանի պատկան մարմիններին, ի մասնաւորի հինգ բաղաձայնով (ԿԳՄՄՆ) ոչնչով չ'երեւացող Մշակոյթի բաժնի աշխատակիցներին, որպէսզի նրանք վերջապէս կարողանան կառավարութեան առջեւ հարց բարձրացնել Երեւանի ամէնահին՝ Թոմս-մարգէտ գերեզմանոցում ամբողջովին անուշադրութեան մատուցուած Առնօ Բաբաջանեանի գերեզմանից նրա աճիւնը կոմիտասի աչքի, քաղաքային Պանթէոն տեղափոխելու համար:

Ես բախտ եմ ունեցել աշխատանքի բերումով, 1973 թուականին երկու օր շփուել հանճարեղ Առնօ Բաբաջանեանի հետ՝ Հայաստանի Ռազմական Վարչական Վարչակազմում, ուր ձայնագրուած էր նրա մշակած «Յորժամ» («Հորժամ», - երբ, այնժամ - Հեն. Անասեան) հոգեւոր, հոգեհանգստեան մեղեդին՝ Լուսինէ Զաքարեանի եւ սենեկային նուագախումբի կատարմամբ: Վստահաբար (ոչ մի դէպքում ՄԻԱՆՇԱՆԱԿ, - ՀԵՆ. Ա.), նա այդ մեղեդին լսել էր էջմիածնի Մայր Տաճարում, Պատարագի ընթացքին՝ Լուսինէ Զաքարեանի կատարմամբ:

«Յորժամ»-ը Պատարագի երգեցողութեան մաս չի կազմում:

Սակայն շատ յաճախ այն կատարուած է նախքան Սուրբ Պատարագի սկսուելը, Սուրբ Խորանի փակ վարագոյրի առկայութեամբ եւ կամ, գրեթէ Պատարագի երգեցողութեան աւարտին՝ Հաղորդութեան ժամանակ, դարձեալ, Սուրբ Խորանի փակ վարագոյրի վիճակում: «Յորժամ»՝ նշանակում է ԵՐԲ, կամ՝ ԱՅՆԺԱՄ: Երգ-մեղեդին արտայայտում է Խընդրանք, Յորդոր՝ ուղղուած օրուայ Պատարագը մատուցող հոգեւորականին, որպէսզի ԵՐԲ գայ նորօրեայ հանգուցեալներին յիշելու պահը, չմոռանայ նաեւ յիշել նրանց անցած-գնացած մերձաւորներին:

Առնօ՝ եւ տխուր, հոգեհանգստեան մեղեդի, երբ նրա ողջ երաժշտական աշխարհը շնչում է լաւատեսութեամբ: Անհաւատալի էր: Ես գիտէի որ նա երիտասարդ տարիքից տառապում էր արեան քաղցկեղով եւ յաճախ էր մեկնում Ֆրանսիա բուժման համար: Տէրը միայն գիտէր թէ հոգեհանգստեան արդիւնքում էր նա եղել, որ նման քայլի էր դիմել: Մինչ նուագախումբը կը յայտնուէր, նա դաշնամուրով ինձ համար նուագեց մշակումը: Առնոն բնաւ այն կենսախիւղ, ուրախ, հուժորով լի երաժիշտը չէր: Անբացատրելի տագնապ կար դէմքին: Ինձ համար ամէն ինչ հասկանալի էր: Բարեբախտաբար դրանից յետոյ նա տաս տարի ապրեց, եթէ կարելի է ապրել համարել, ու կեանքին հրաժեշտ տուեց 62 տարեկան հասակում:

Այդ օրերին համատեղութեան կարգով ես վարում էի Հայկական Ռազմային Ֆոնդային (մնայուն) ձայնագրութիւնների բաժինը եւ, ի պաշտօնէ հետեւում էի ձայնագրութեանը եւ մտքեր փոխանակում էի նրան հասկացնել, որ այժ. ձայնագրութիւնը կը լինի, Լուսինէն էլ կ'երգի, բայց ուղիւղով եթէր սփռել չի լինի: Երեւի նա չգիտեր, որ հայկական հոգեւոր երաժշտութիւն արդիւրուած էր ուղիւղով հաղորդելը:

Ձայնագրութիւնը հոյակապ ստացուեց եւ մտաւ ձայնագրանի փակ ֆոնդ: Այդ նշանակում էր, որ դու քո պատասխանատուութեամբ կարող ես այդ ձայնագրութիւնից օգտուել մի փոքր մաս, կամ հատուած վերցնել ու տեղադրել որեւէ գրական-երաժշտական հաղորդման մէջ:

Երաժշտական հաղորդումներ իմ բազմաթիւ գլխաւոր իմբազիր, տաղանդաւոր լրագրող եւ հիանալի թարգմանիչ Արմէն

Յովհաննիսեանի հետ ուղիներ էինք փնտռում Առնոյի այդ հրաշալի մշակումը եթէր տալու համար:

Եղաւ այնպէս, որ Արմէնը պիտի գնար Մոսկուա՝ գործուղման: Ինչպէս նախկինում, ես էի փոխարինելու նրան: Ձայնագրանի տնօրէնուհին, Տիկին Ռոզան միայն Արմէնի ստորագրութեամբ իրաւունք ունէր փակ ֆոնդից որեւէ ձայնագրութիւն դուրս հանել: Որոշել էի, ինչ գնով էլ լինի՝ Առնոյի գործը հասցնել ուղիւղուելու ինչպէս, հաշուի չառնելով անգամ աշխատանքից վտարուելու վտանգը: 1965-ի դէպքերի յիշողութիւնը դեռ թարմ էր մարդկանց երեւակայութեան մէջ:

Առանց երկար-բարակ, ծանր-թեթեւ անելու, քայլերս ուղղեցի դէպի ձայնագրան.

- Տիկին Ռոզա, ինչդուրս եմ բերէք Առնօ Բաբաջանեանի գործի օրերս կատարուած ձայնագրութիւնը, օգտագործելու եմ իմ մի հաղորդման մէջ, - միագամայն ինքնավստահ, առանց ջուղումի դիմեցի տիկնոջը:

- Ախր Հենրիկ ջան, էդ ձայնագրութիւնը փակի տակ է..., եւ յետոյ, գիտես էլի, Արմէնի ստորագրութիւնն է պէտք...

- Ինչ է, չգիտե՞ս, որ նա քաղաքում չէ, եւ ես եմ նրան փոխարինում:

- Ի՞նչ իմանամ Հենրիկ ջան..., գիտես չէ՞, թէ ես քեզ որքան եմ սիրում, յանկարծ բան-ման դուրս չգա՞յ...

- Չէ, չէ՞, մի անհանգստանայ, մի փոքր հատուած եմ օգտագործելու:

Օրը Հինգշաբթի էր, ես միայն մէկ օր ունէի յանդուգն մտադրացումս իրագործելու համար: Երկուշաբթի Արմէնը գալու էր աշխատանքի: Ինձ մտնում էր միայն Ուրբաթ օրը: Մտնում եմ Հայկական երաժշտութեան հաղորդումների իմբազարութիւն.

- Օֆելիա Արտեմովնայ, դուք կիրակի օրուայ Պատուէրով Համերգը կազմե՞լ էք, - դիմում եմ աւագ իմբազարին:

- Ոչ, դեռ չեմ կազմել, բայց պատրաստուում եմ սկսել, շատ պատուէրներ կան, մանաւանդ գիւղերից:

Ինչ լա՛ւ, Օֆելիա Արտեմովնայ, այս կիրակի օրուայ Պատուէրով Համերգը ես եմ կազմելու, դուք ձեր թողէք յաջորդ կիրակի օրուայ համար:

- Մաղարիչ ունէք մաեստրօ, ես էլ պատրաստուում էի ձեզ խնդրել, որ թոյլ տաք այսօր աւելի վաղ թողնել աշխատանքը:

- Ազատ էք, կարող էք հիմա իսկ գնալ:

Վերադարձայ աշխատասենեակս ու, ինչպէս ասում են՝ անցայ հեռախօսի գլխին.

- Արարա՛տ..., ո՞րտեղ ես, դասասենեակում, թէ՞ կաբինետում (Արարատ Քոչարեանը Երեւանի Շահումեանի շրջանի Մետաքսի կոմբինատի բանուորական միջնակարգ դպրոցի տնօրէնն է):

- Կաբինետում եմ, ի՞նչ կայ, ի՞նչ է եղել Հենրիկ, ձայնդ մի տեսակ տագնապալից է հնչում:

- Ամէն ինչ լաւ է Արարատ: Հիմա ինձ ուշադիր լսիր: Քո այդ բանուոր «աշակերտներից» մի տաս տասնհինգ հոգուց պատուէր ես վերցնում, թէ իւրաքանչիւրն ի՞նչ երգ կամ մեղեդի կ'ուզենայ լսել կիրակի օրուայ Պատուէրով Համերգի ժամանակ: Քեզ մի ժամ ժամանակ, ոչ աւելի:

- Հենրիկ ջան, էդ ի՞նչ բանի

ես ախպե՛ր, ինչ համերգ, ի՞նչ պատուէր...

- Արարատ, դու ինձ զարմացնում ես, ի՞նչ է, դու էս աշխարհից չե՞ս..., հեչ պատուէրով համերգ չես լսե՞լ կիրակի օրերին...

- Լսել եմ, ի՞նչպէս չեմ լսել...

- Դէ՛, եթէ լսել ես, սա էլ դրանցից մէկն է: Շարունակեմ ասելիքս: Պատուէրներից մէկը պարտադրաբար պիտի լինի միջնադարեան «Յորժամ» հոգեհանգստեան մեղեդին՝ Լուսինէ Զաքարեանի կատարմամբ: Ընտրիր այնպիսի մէկին, որը քիչ-միչ կարդացող լինի:

- Այդ ի՞նչ ես անում եղբայր, յեղափոխութիւն..., ուղիւղով հոգեւոր ե՞րգ...

- Այո Արարատ, մենք միասին ենք յեղափոխութիւն անելու...

- Հասկացայ Հենրիկ, հիմա հասկացայ, միայն թէ ինձ համար պարզ չէր, թէ ինչ էր գործի անուանումը:

- Յորժամ, երկու վանկ է, ՅՈՐԺԱՄ...

- Յորժամ..., - լա՛ւ... բա էդ խեղճ աղջիկն ի՞նչ գիտի թէ ինչ է Յորժ

- «Յորժամ»՝ գրաբարից է գալիս եւ նշանակում է՝ Երբ որ, երբ: Մի խօսքով՝ կարելի է ասել նաեւ Այնժամ: Մարդ ես, եթէ այդ աղջկան հարցնող լինի թէ ո՞րտեղից է լսել այդ մեղեդին, թող ասի, որ լսել է էջմիածնի Մայր Եկեղեցում, պատարագի ժամանակ, Լուսինէ Զաքարեանի կատարմամբ:

- Եղաւ Հենրիկ, հասկացայ..., բայց դու չգիտե՞ս, որ ես կուսակցական եմ, այդ ի՞նչ հակախորհրդային յանձնարարութիւն ես տալիս ինձ:

- Լսի՛ր ընկեր կուսակցական, բա ինչի՞ր ես գալիս եկեղեցի, դեռ մոմ էլ ես վառում...

- Ես քո պատարագները լսելու համար եմ գալիս...

- Գիտեմ: Կիրակի օրն էլ պատուէրով համերգի ընթացքին կը լսես Առնօ Բաբաջանեանի մշակած «Յորժամ»ը՝ Լուսինէ Զաքարեանի կատարմամբ:

Բաւական երկար տեւեց չարաբաստիկ համերգի պատրաստելը: Որոշել էի մի քանի նախադատութեամբ ներկայացնել թէ Բաբաջանեանին, թէ կատարող ստեղծագործութեանը, եւ թէ՛ սքանչելի երգչուհուն, որ նոր-նոր էր արժանացել համընդհանուր ճանաչման: Յետագայում հասկացայ, որ նման մօտեցմամբ, ես թեթեւացրել էի իմ մեղքը՝ «արգելուած պտուղը» հրամցնելով հասարակութեանը:

Ես մերոնց տեղեակ չէի պահել երեւոյթի մանրամասների մասին, միայն խնդրեցի, որ բոլորս մէկ-տեղուենք մեր խոհանոցում՝ լսելու համար պատուէրով համերգը: Երեւանում սովորութիւն է ուղիւղուելու ինչից խոհանոցի պատին ամրացնելը: Եկաւ «Յորժամ»ի պահը եւ բոլորս քարացանք: Ոչ մի ձայն, ոչ մի շշուկ միմեկէ մեղեդու աւարտը եւ նրանից յետոյ էլ մի քանի վայրկեան: Երկար լուսութիւնից յետոյ հայրս էր խօսողը.

- Էս ի՞նչ է, Հենրիկ, արդէն թոյլատրու՞ւմ է հոգեւոր երաժշտութիւն հաղորդել ուղիւղով:

- Ոչ հայրիկ, չի թոյլատրուում: Այդ ես է, որ խախտել եմ օրէնքը: Ինչո՞ւ պիտի ազատօրէն կարողանանք եթէր սփռել Բախի, Մոցարտի, Բեթհովէնի հոգեւոր երաժշտութիւնը, իսկ մերը, հայկականը՝ ոչ: Ի՞նչ տիմար որոշում

Ռազմիկ Դաւոյեանի «Ռեքվիէմ»ը

ՍԱՐԳԻՍ ՎԱՅՎԱԸ



Ռազմիկ Դաւոյեանի մուտքը մեր քերթողական անդաստանէն ներս եղաւ անաղմուկ. վտիտ քերթողատետր մը՝ «Իմ Աշխարհը», Պարոյր Սեւակի խմբագրութեամբ: Յետոյ, «Ստուերների Միջով»ը՝ դարձեալ վտիտ ու անշուք կազմով: Բայց այսքանն ալ բաւական եղաւ որ նոր շունչով, նոր նայուածքով եւ նոր տեսլականով օժտուած բանաստեղծը պարտադրէ ինքզինք եւ գրաւէ իր արժանի տեղը Հայրենի բանաստեղծներու աւագ-նորերու հոյլի կողքին: Ճիշդ է, հոյլին ամենակրտսերն էր, բայց արդէն կը զանազանուէր հոյլէն: Նոր հոյլի մը նախակորիզը կը դառնար, որպէս խոզարկուն նոր հորիզոններու: Փայլուն խոստում մըն էր: Եւ սպասցնել չտուաւ այդ խոստումը: Ահաւասիկ հասունութեան իր փաստը՝ «Ռեքվիէմ» իր երկարաշունչ պոէմը:

Ա՛լ իր տարերքը մարդն է, քարանձաւի դարերէն մինչեւ տիեզերական թռիչքներուն հասնող մարդը, մարդը եւ անոր բախտը, մարդը եւ անոր ճամբան, մարդն ու մահը, մարդն ու երջանկութեան որոնումը, մարդն ու իր ստրկացումը, ինչպէս նաեւ անոր մաքառումները, թախիծը, առանձնութիւնն ու ազատութեան տենչը: «Ռեքվիէմ»ը պարզապէս մարդերգութեան պոէմն է, անոր բոլոր յոյզերուն, բոլոր երազներուն եւ թռիչքներուն, նաեւ՝ բոլոր անկումներուն եւ եղծանումներուն հերարձակ երգը վսեմ: Կարճ բանաձեւումով՝ պատկերազարդ պատմութիւնը անցեալին, եռքն ու բաբախումը ներկայի սրտին եւ լուսատենչ թռիչքը դէպի գալիք օրերը պայծառ: Բարեբախտաբար, ընդհանրական մարդը բանաստեղծին նայուածքէն չէ պահած, չէ ծածկած մարդու առանձնայատուկ այն տեսակը որ հայ մարդ կը կոչուի: Դաւոյեանին համար մարդկութեան արիւնոտ ճանապարհին վրայ, առանձնայատուկ հանգրուան մըն է հայ մարդուն խաչելութիւնն ու յարութիւնը: Ան երգած է Հայ Գողգոթան որպէս մարդկային մեծագոյն աղէտներէն ամէնէն եղերելին: Երգած է «եղեռնի օրեր»՝ անապատի աւազներուն վրայ լլկուած» որպէս նախատինք, «մեր բախտի բոլոր անդունդները», ինչպէս նաեւ մեր յարութեան «յոյան ու հաւատքը»:

Իր ընդհանրութեան մէջ այս է նոր խօսքը Դաւոյեանին. հոգեհանգիստ մարդկութեան երկար ճանապարհին ինկած նահատակներուն եւ հաւատք նաեւ՝ մարդուն բարոյութեան եւ վերընձիւղումին հանդէպ: Բայց ինչպէս ամէն ընդհանրացում, այս մէկն ալ կը մնայ տժգոյն եւ մասամբ անզօր՝ Դաւոյեանի գրքին գահավիժող զգացականութեան, խառնող խոհերուն եւ մրդկաշունչ թաւալքին դէմ յանդիման: Եւ այս բոլորը մատուցուած՝ ցնցող կամ քնքոյշ բայց անպայման կլանիչ պատկերներով, երեւակայութեան հզօր թափով,

հրաշէկ կիրքով, խանձող մորմոքով, ինչպէս նաեւ գլգլացող մեղմութեամբ, հեւացող բայ խօսուն լուրթեամբ եւ ամբողջութեամբ՝ շունչը բունող գեղեցկութեամբ:

Գեղեցկութիւն ժայթքեցնելու մոգականութիւն ունի Դաւոյեան: Գեղեցկութիւն շող տալու, ամէն մէկ քայլափոխիլ քեզ անոնցմով ողորդելու հմայիչ կարողութիւնը ունի ան: Լսենք գինք.

«Տուէք ինձ իմ ձեռքերը, եւ ձեզ համար գոյն-գոյն լոյսեր կը քաղեմ ես,

կը հաւաքեմ ծաղիկների շուկաները մէկ-մէկ...»:

Գեղեցկութիւնը գլխաւորաբար իր նայուածքին մէջ է, որ գիտէ սեւեռուիլ ամենահասարակ իրի, տարրի կամ երեւոյթի վրայ եւ անոր սովորական վարչամակին տակէն դուրս հանել ընտրանի գեղեցկութիւնը: Ահա՛ նմոյշ մը եւս.

«Տա՛ւ է. Անասելի, անծա՛յր մի տապ, Հեռու քարանձաւից Խեղդուող օրուայ խոխոցն է գալիս...»

Սա սովորական, առօրեայ բառերու շարալարում մըն է: Բառերը առանձին-առանձին առած՝ ո՛չ բանաստեղծական են եւ ոչ ալ թելադրական, բայց բանաստեղծին գրչին տակ մէկտեղուելով, շարահիւսուելով կը ստեղծեն պահի մը ֆիզիքական զգացողութեան այնպիսի թելադրականութիւն մը, որուն ազդեցութեան տակ ոչ միայն բուռն թափով կ'ապրինք պահը, այլ եւ մանաւանդ թափ կու տանք մեր երեւակայութեան, երթալ հասնելու համար մինչեւ նախամարդուն քարանձաւները: Իսկ երբ ան կ'ըսէ.

«Մեր երբանը - ձեղքուած ու վիրաւոր մի սիրտ՝

Ատամների վայրագութեամբ բռնաբարուած»,

մեր սովորական, այնքան պիտանի ակոյա-ատամներուն կը վիճակուի վայրագութեամբ բռնաբարողի այնպիսի սոսկալի դեր մը, որ ֆիզիքական իրականութենէն անդին կը մատնէ դասակարգ մը մարդոց գիշատիչ խորթակները այնքան դիպուկ ձեւով:

Այսպիսով Դաւոյեան կը դառնայ բառերու, պատկերներու ալիք-միաստ մը: Ան չի վարանիր բառերու օրինաւոր շարահիւսութիւնն իսկ խառնշտելէ եւ անոնց իմաստն ու պաշտօնը շրջելէ, բռնելու համար ճիշդ այն պատկերը, որմէ լաւագոյն հանդերձանքով պիտի ցայտէ միտումն ու մտածումը:

Այսպէս՝ «Աղաղակով թռչող լճեր կային՝

Մեռած կարապետի մարմինների վրայ»

կ'ըսէ բանաստեղծը պատկերելու համար անմեղութեան, յոյսին խողխողումին ողբերգութիւնը,

կարապին յատկանիշները լճին փոխանցելով:

Պատկերաւոր մտածողութիւնը Դաւոյեանի նախընտրած ձեւն է: Պատկերներու կը հանդիպինք գրեթէ ամէն անկիւնադարձի, իւրաքանչիւր տողի մէջ, պատկերներ որոնք կը խածնեն, կը մտրակեն մեր երեւակայութիւնը անոր ընձեռելով ուժականութիւն մը որ կը գերազանցէ իրականութիւնը: Տակաւին, անոնք կրնան նրբօրէն շոյել մեր զգացումները, նոր գեղեցկութիւններ կը հիւսեն ներաշխարհիդ մէջ, միշտ յայտնուելով չսպասուած անկիւնէն, անակնկալի բերելով քեզ, արթուն ու զգաստ պահելով ուշադրութիւնը: Եւ բնաւ չեն յոգնեցնէր այդ պատկերները, որովհետեւ թարմ են, ճկուն, ճշգրիտ եւ վայելչագեղ անպայման, եւ ունին իրենց անհրաժեշտ դերն ու պաշտօնը՝ այսպէս՝

«Առուններում լոյսը կարկաչում է ահա, Քարերը ծաղկում են, Գոյն-գոյն ծիծաղները թռչկոտում են ծաղկած քարերի մէջ»:

Դեռ կարելի է բերել բուռ-բուռ այլ պատկերներ ալ, «ծովէն հանուած» մարգարիտի պէս մաքուր, բիւրեղ ու վճիտ: Ատոր համար հարկ պիտի ըլլայ մէջբերել ամբողջ գիրքը:

Դաւոյեանի լեզուն հարուստ է եւ ճկուն միանգամայն: Գրաբարէն առած է յորձք եւ վեհութիւն, արեւմտահայերէնէն՝ զգացական նրբութիւն եւ գունագեղութիւն իսկ արեւելահայերէնը պարզեւած է իրեն հիւթեղ պարզութիւն եւ քնարականութիւն: Երեքին համադրութեամբ ստեղծած է բազմերանգ, նրբագեղ լեզու մը որ ըստ պահանջի յորձանուտ է, կամ մեղմ ու հանդարտ, մերթ շաշող ու խաղաւոր, մերթ ալ վեհ ու միաթիք: Ամէն հոգեվիճակի հարազատութիւն, ամէն մտածումի պայծառութիւն եւ զգացումի խռովք պարզեւող լեզու:

Երբ իր աւարտին կը փակենք գիրքը եւ կը փորձենք կշիռքի զարնել գայն, կ'ունենանք վարանման պահ մը. ո՞ր ծանրութեան չափով կշռել գայն, ինչպիսի չափանիշով արժեւորել կամ ինչ տարազի տակ բերել «Ռեքվիէմ»ը: Բոլոր մեր ունեցած չափանիշները, այս պարագային, անյարմար կը թուին, ժամանցուած: Որովհետեւ, Դաւոյեան, հակառակ իր հին ու խոր արմատներուն, նոր է ամբողջութեամբ: Նոր՝ համամարդկային իր հորիզոնով, նոր՝ տիեզերականին իր ձգտումով եւ շունչով, նոր՝ մտածելակերպով, զգայնութեամբ, նայուածքով, արտայայտչականութեամբ եւ մանաւանդ ներշնչումով: Ինքնին, ինք արդէն որ չափանիշ մըն է, մեր նոր բանաստեղծութեան նոր չափանիշը:

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services
 From Armeno-Turkish to Armenian and English languages.
 Bring your family's history back to life!
 Family letters, postcards, diaries, and more...
 Please reach out for quotes
 Website: norayr.daduryan.com
 Email: norayrdaduryan@gmail.com

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Ճափոնի Մէջ Պարզեւատրուեցաւ Դաշնակահար Թաքաիիւ Աքիպան՝ Հայ Երաժշտական Մշակոյթը Տարածելու Համար



Ճափոնի մէջ հայ երաժշտական մշակոյթն աշխուժօրէն տարածելու գործին մէջ մեծ ներդրում ունենալու համար, Թոքիոյի մէջ կոմիտասի անուան երաժշտական միութեան համահիմնադիր, տաղանդաւոր դաշնակահար Թաքաիիւ Աքիպան պարզեւատրուեցաւ ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզութեան նախարարութեան մետալով: Սոյն թուականի յունուար 17-ին, դեսպան Արեգ Յովհաննիսեանը ՀՀ դեսպանութեան ներս մետալը յանձնեց Ճափոնցի երաժիշտին: Հանդիպման ընթացքին քննար-

կուեցան յառաջիկային իրագործուելիք ծրագիրները, մասնաւորաբար, Հայաստանի եւ Ճափոնի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակին առթիւ նախատեսուող միջոցառումները: Տեղեկացնում ենք նա-, որ ս.թ. մարտի 13-ին Տոկիոյում կկայանա Ակիբայի եւ Չուիակահար Կեիկո Ուրուչիհարայի համերգը, որի շրջանակներում երաժիշտները կկատարեն նաեւ Արնո Բաբաջանյանի ստեղծագործութիւնները՝ հայանվանի երգահանի 100-ամյակի կապակցութեամբ:

Պետրոս Դուրեանի «Տրտունջ»ը Երգի Վերածուած

Պոլսահայ շնորհալի երգչուհիներէն Մարալ-Ալվազ-Չաղլըջուպուքճու այս օրերուն նոր երգ մը ձայնագրած է ու տեսահոլովակ պատրաստած այդ երգին համար: Երգին անունը՝ «Տրտունջ» է եւ յօրինուած է անմահանուն բանաստեղծ Պետրոս Դուրեանի համանուն բանաստեղծութեան բառերուն վրայ: Երգը ձօնուած է Պետրոս Դուրեանի ծննդեան 170-ամեակին: Վաղամեռիկ բանաստեղծի ամենանշանաւոր ստեղծագործութիւններէն մէկն է «Տրտունջ»ը, որուն ամէն մէկ տողին վրայ՝ կը պոռթկայ բանաստեղծին անհուն հառաչանքը: Դուրեանի հրաժեշտի խօսքն է ահիկա, որուն մէջ հեղինակը թշուառ հոգիներու անլսելի ողբալի ձայնը լսելի կը դարձնէ



բանաստեղծական տպաւորիչ մեկնաբանութիւններով: «Տրտունջ»ը երգի վերածուած է յօրինող Նորայր Տէմիրճիի կողմէ: Երգչուհին այս երգը կը ձօնէ լիշատակին բոլոր անոնց, որոնք անժամանակ բաժնուած են մեզմէ եւ իրենց կեանքը կորսնցուցած գինուորական պարտականութեան ընթացքին:

Տօքթ. Արէտ Զէրչի Եօզբանի Վիրաբուժական Նոր Տեսութիւնը

Գեղագիտական վերականգնողական վիրաբուժութեան փրօֆեսորի օգնական Տօքթ. Արէտ Զէրչի էօզբանի մշակած վիրաբուժական մեթոտները՝ մեծ ընդունելութիւն կը գտնեն բժշկական աշխարհին ներս: Ան կը շարունակէ մշակել նոր տեսութիւններ ու դարմանումի ձեւեր: Տօքթ. Արէտ անցեալ շաբաթավերջին, մասնակցեցաւ Իսթանպուլի մէջ կայացած միջազգային գիտաժողովի մը: Յարգելի վիրաբուժ, հանդէս եկաւ վիրաբուժական դարմանումի նոր մեթոտով, որ ինք մշակած է եւ արդէն կը կիրարկէ «երկարաքիթ հիւանդներ»ու համար: Ան բացատրեց նորարարական իր դարմանումները, գոր մշակած է երկար քիթ ունեցող անձերու վիրաբուժական գործողութիւններու համար: Հպարտալի է տեղեկանալ որ



Տօքթ. Արէտ Զէրչի էօզբանի այս նիւթով յօդուածը՝ քանի մը ամիս առաջ, հրատարակուած էր ամերիկեան հեղինակաւոր «ժընըլ օֆ Կրանիոֆէսիլ սըրճըրի» ամսագրին մէջ:

Հաղորդագրութիւն Արեւմտեան Թեմին Պաշտօնական Հաստատման 95-ամեակի Նշում

2022 թուականը մեծ հանդիսութեամբ պիտի նշէ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմին պաշտօնական հաստատման 95-ամեակը (1927 թուականին): Պատմական այդ իրադարձութիւնը սունախմբելու նպատակով, տեղի պիտի ունենան հոգեւոր ձեռնարկներ, եկեղեցական տօնախմբութիւններ եւ հրատարակութիւններ: Այս ուրախ առիթով, Թեմիս բոլոր եկեղեցիներէն ներս, Սուրբ Պատարագներու ընթացքին պիտի ընթերցուին Հոգեւոր Խորհմեան Հայրիկ եւ Գէորգ Ե. Ամնայն Հայոց Կաթողիկոսներու կոնդակները, ինչպէս նաեւ Արեւմտեան Թեմի անդրանիկ առաջնորդ՝ Գարեգին Արքեպս. Խաչատուրեանի (Տրապիզոնի) պաշտօնական թուղթը: Յունուար 23, 2022ին, պիտի ընթերցուին Երջանկալիշատակ Խորհմեան Հայրիկ եւ Գէորգ Ե. Կաթողիկոսներու պատմական կոնդակները (որոշ հատուածներ): Յունիս 19, 2022ին, Սուրբ Էջմիածնի Տօնին, պիտի ընթերցուի Արեւմտեան Թեմի առաջին առաջնորդ՝ Գարեգին Արքեպս. Խաչատուրեանի պաշտօնական խօսքը (հատուածներ): Սեպտեմբեր 11, 2022ին, Խաչվերացի Տօնին, պիտի ընթերցուի Թեմի ներկայ առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրատէրեանի 95ամեակի փակման խօսքը: Այս առիթով, Երեքշաբթի, Փետրուար 22, 2022ին, Սրբոց Ղեւոնդեանց Տօնին, Թեմիս Առաջնորդարանէն ներս (Պըրպէնք) տեղի պիտի ունենայ Արեւմտեան Թեմէն ներս ծառայող Հոգեւորականներու լիագումար Ընդհանուր Ժողով մը, որմէ ետք երեկոյեան ժամը 6:30-ին, Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ պիտի մատուցուի գոհարանութեան Սուրբ Պատարագ, Թեմիս բոլոր Հոգեւորականներու եւ հաւատացեալներու ներկայութեամբ: Արեւմտեան Թեմին պաշտօնական հաստատման 95ամեակը լիարժէք կերպով տօնախմբելու դիտաւորութեամբ, Հոգեւորականներու Միօրեայ Ընդհանուր Ժողովը առաջադրած է ժողովին տալ առաջնորդող հոգի եւ գաղափարական բնաբան մը, որ խտացած է հետեւեալ բանաձեւումով: «Ծիսական Պաշտամունք եւ Քրիստոնէական Կեանք»: «Քրիստոնէական Հաւատք»ին վերաբերող այս նիւթով, հոգեւորականներու ժողովը կը փափաքի նոր անունը եւ նոր մղում տալ Եկեղեցւոյ «Հեզեւոր Ծառայութեան» հոգիին: Այս ընդհանուր նիւթի ծիրէն ներս, ժողովի ընթացքին, եկեղեցականներու կողմէ պիտի ներկայացուին երեք նշանակալից նիւթեր: «Աստուածապաշտութիւն, Ծիսական Պաշտամունք եւ Քրիստոնէական Կեանք» (Տաճար Մ. Վրդ. Եարտըմեան, «Եկեղեցական Աղօթքը՝ իբր հոգեւոր ապրում» (Արժն. Տ. Վազգէն Քհնյ. Մովսէսեան) եւ «Սուրբ Պատարագին մասնակցութիւնը եւ Ներգործութիւնը Հաւատացեալներու Կեանքին Մէջ» (Արժն. Տ. Աւետիս Քհնյ. Աբովեան):



Շաբաթներէ ի վեր գրեթէ կազմալուծուած վարչապետ Միքայիլի ղեկավարած համախոհական ազգային դահլիճը՝ վերսկսաւ իր օրինական նիստերուն: Անդամալուծութեան այս երկարատեւ վիճակի պատճառը՝ նաւահանգիստի պայթիւնին պատասխանատուներու հարցաքննութիւններն էին, յատկապէս Հրգպալլա եւ Ամալ Կուսակցութիւններու ժխտական կեցուածքը: Այս իսկ պատճառով երկիրն ինկաւ տնտեսական եւ ընկերային ծայրայեղ կացութիւններու մէջ, որոնց հետեւանքով, արտասահմանեան օժանդակութիւններն ու ներքին բարեկարգութիւնները կանգ առնելով ստեղծուեցաւ անել կացութիւն մը: Թշուառութիւնը, աղքատութիւնն ու գործազրկութիւնը հասաւ իր վատթարագոյն վիճակին: Վերջապէս Ամալ եւ Հրգպալլա Կուսակցութիւնները անդրադառնալով այս անկումային վիճակին, որոշեցին ետ դարձ մը կատարելով, աջակցել Միքայիլի կառավարութեան: Արդարեւ, այս նոր դիրքորոշումը՝ վերապահ լաւատեսութիւն մը ստեղծեց ժողովուրդին մօտ, որ՝ հասած էր յուսահատութեան եզրին: Ազգային համախոհութեան եւ միասնութեան դահլիճը՝ այսուհետեւ իր նիստերը պիտի գումարէ վարչապետարանին մէջ, փոխանակ նախագահական պալատին: Այս առիթիւ Լիբանանի սակարանն ալ սկսաւ դրական նշաններ ցոյց տալ: Մէկ տոլարի դիմաց լիբանանեան լիբան 30,000-էն իջաւ մօտ 24,000-ի սահմանները: Միւս կողմէ Լիբանանի ճարտարարուեստի նախարար ճորճ Պուչիքեան, իրաքէն վրադարձած ըլլալով, տեսակցութիւն մը ունեցաւ Հանրապետութեան նախագահ Մինէլ Աունին հետ: Այս հանդիպման ընթացքին Պուչիքեան նախագահ Աունին ներկայացուց լիբանանցիներուն հետ գործակցելու իրաքցիներուն պատրաստակամութիւնը:

Լիբանան Վերջապէս Նախարարաց Խորհրուղը Վերսկսաւ Իր Օրինական Նիստերուն

Վերջապէս Ամալ եւ Հրգպալլա Կուսակցութիւնները անդրադառնալով այս անկումային վիճակին, որոշեցին ետ դարձ մը կատարելով, աջակցել Միքայիլի կառավարութեան: Արդարեւ, այս նոր դիրքորոշումը՝ վերապահ լաւատեսութիւն մը ստեղծեց ժողովուրդին մօտ, որ՝ հասած էր յուսահատութեան եզրին: Ազգային համախոհութեան եւ միասնութեան դահլիճը՝ այսուհետեւ իր նիստերը պիտի գումարէ վարչապետարանին մէջ, փոխանակ նախագահական պալատին: Այս առիթիւ Լիբանանի սակարանն ալ սկսաւ դրական նշաններ ցոյց տալ: Մէկ տոլարի դիմաց լիբանանեան լիբան 30,000-էն իջաւ մօտ 24,000-ի սահմանները: Միւս կողմէ Լիբանանի ճարտարարուեստի նախարար ճորճ Պուչիքեան, իրաքէն վրադարձած ըլլալով, տեսակցութիւն մը ունեցաւ Հանրապետութեան նախագահ Մինէլ Աունին հետ: Այս հանդիպման ընթացքին Պուչիքեան նախագահ Աունին ներկայացուց լիբանանցիներուն հետ գործակցելու իրաքցիներուն պատրաստակամութիւնը:

Վերջապէս Ամալ եւ Հրգպալլա Կուսակցութիւնները անդրադառնալով այս անկումային վիճակին, որոշեցին ետ դարձ մը կատարելով, աջակցել Միքայիլի կառավարութեան: Արդարեւ, այս նոր դիրքորոշումը՝ վերապահ լաւատեսութիւն մը ստեղծեց ժողովուրդին մօտ, որ՝ հասած էր յուսահատութեան եզրին: Ազգային համախոհութեան եւ միասնութեան դահլիճը՝ այսուհետեւ իր նիստերը պիտի գումարէ վարչապետարանին մէջ, փոխանակ նախագահական պալատին: Այս առիթիւ Լիբանանի սակարանն ալ սկսաւ դրական նշաններ ցոյց տալ: Մէկ տոլարի դիմաց լիբանանեան լիբան 30,000-էն իջաւ մօտ 24,000-ի սահմանները: Միւս կողմէ Լիբանանի ճարտարարուեստի նախարար ճորճ Պուչիքեան, իրաքէն վրադարձած ըլլալով, տեսակցութիւն մը ունեցաւ Հանրապետութեան նախագահ Մինէլ Աունին հետ: Այս հանդիպման ընթացքին Պուչիքեան նախագահ Աունին ներկայացուց լիբանանցիներուն հետ գործակցելու իրաքցիներուն պատրաստակամութիւնը:

«Մանչեսթեր Սիթին» Պարտութեան Մատնեց «Չելսիին»



Անգլիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին ախոյեան եւ առաջատար «Մանչեսթեր Սիթին» ընդունեց Ախոյեաններու Լիկայի գաւաթակիր Լոնտոնի «Չելսիին»: Նուազագոյն արդիւնքով առաւելութեան հասաւ Գաթալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորած խումբը: Միակ կողմ 70-րդ վայրկեանին նշանակեց պելճիգացի կիսապաշտպան Քեւին Տէ Պրոյնէն: «Մանչեսթեր Սիթին» 56 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

«Լիւերփուլ» Յաղթեց Եւ Բարձրացաւ Երկրորդ Տեղը

Անգլիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին «Լիւերփուլ» ընդունեց «Պրենթֆորտին» եւ յաղթանակի հասաւ 3:0 արդիւնքով: Գերմանացի Երգեն Կրոպի գլխաւորած խումբէն աչքի ինկան պրագիլացի կիսապաշտպան Ֆապիէնտն, անգլիացի կիսապաշտպան Ալեքս Օկսլէյտ-Չեմպլըլէնը եւ ճաբոնցի յարձակող Թակուճի Մինամինտն: «Լիւերփուլ» (21 խաղ) 45 կէտով բարձրացաւ երկրորդ տեղ եւ 2 միաւոր առաջ է երրորդ տեղը նահանջած «Չելսիին» (22 խաղ): Առաջատարը «Մանչեսթեր Սիթին» է (22 խաղ) ունի 56 կէտ:

Օլիւերյան Յաղթական Կոլով Նշեց Նորամուտը «Ռոմայի» Կազմէն Ներս

Իտալիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին «Ռոման» սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Գալեարիի» հետ: Փորթուգալացի Ժոզէ Մուրիլիոյի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով: Միակ կողմ 33-րդ վայրկեանին 11 մեթրանոցէն նշանակեց խումբի նորեկ, 29-ամեայ փորթուգալացի կիսապաշտպան Սերժիու Օլիւերյան: Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» հիմնական կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ հանդիպումին: «Ռոման» 35 կէտով բարձրացաւ 5-րդ տեղը: Նոյնքան միաւոր ունի 6-րդ տեղը գտնուող «Լացիոն»:



«Ռեալ» 12-րդ Անգամ Ըլլալով Նուաճեց Սպանիոյ Սուփըրգաւաթը

Մ ա տ ր ի տ ի «Ռեալը» 12-րդ անգամ նուաճեց Սպանիոյ սուպերգաւաթը: Պիլքատի «Աթլէթիքը» չկարողացաւ պաշտպանել անցած տարի նուաճած այս տիտղոսը: Իտալացի Կառլո Անչելոտիի գլխաւորած խումբը «Աթլէթիքի» նկատմամբ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:



Մէլուտեան Արաբիոյ մայրաքաղաք Ռիյատի մէջ տեղի ունեցած եզրափակիչ խաղի հաշիւը 38-րդ վայրկեանին բացաւ խորուաթ կիսապաշտպան Լուկա Մոտիչը, իսկ 52-րդ վայրկեանին 11 մեթրանոցը արդիւնաւէտ կատարեց ֆրանսացի յարձակող Քարիմ Պենզեման: «Ռեալը» նախորդ անգամ Սպանիոյ սուփըրգաւաթակիր դարձած էր 2020-ին: Այս գաւաթի մրցանիշը կը պատկանի «Պարսելոնային», որ 13 անգամ դարձած է երկրի սուփըրգաւաթակիր:

Հայաստան - Մոնթենեկրո Հանդիպումը Կը Կայանայ Մարտ 24-ին

Ֆութպոլի Հայաստանի եւ Մոնթենեկրոի հաւաքականներու ընկերական հանդիպումը Երեւանի մէջ տեղի պիտի ունենայ Մարտի 24-ին: Հայաստանի հաւաքականը Մարտի 29-ին Նորուեկիայի մայրաքաղաք Օսլոյի մէջ ընկերական հանդիպում կ'ունենայ այդ երկրի ազգային հաւաքականի հետ: Հայաստանի հաւաքականը կը պատրաստուի Ազգերու Լիկայի Ե լիկայի առաջին խումբի հանդիպումներուն: Հայաստանի մրցակիցները կ'ըլլան Ուքրանիոյ, Իռլանտայի եւ Սկոտլանդի խումբերը: Հանդիպումները տեղի կ'ունենան 2022-ի Յունիսին եւ Սեպտեմբերին:

Հայաստանի Պարային Ձոյգը 13-րդն Է Եւրոպայի Մէջ



Թալինի մէջ աւարտեցաւ գեղասահքի Եւրոպայի առաջնութեան պարային զոյգերու մրցաշարը: Ազատ ծրագրին մէջ Հայաստանը ներկայացնող Տինա Կարապետեան եւ Սիմոն Սենեկալ զոյգը վաստակեցաւ 102,85 կէտ եւ 20 մասնակիցներու մէջ զրաւեց 11-րդ տեղը: Երկու ծրագրերու արդիւնքով անոնք 168,43 կէտով առաջնութիւնն աւարտեցին 13-րդ դիրքի վրայ: Եւրոպայի ախոյեան դարձաւ Վիքթորիա Մինիցինա-Նիկիտայ Կացալպով ռուսական զոյգը: Երկրորդ տեղը նոյնպէս բաժին հասաւ Ռուսաստանի ներկայացուցիչներուն: Հայ մարզիկները անցած տարի նուաճած էին Ոլիմպիական իսպանացի մասնակցելու իրաւունք եւ Փետրուարին հանդէս պիտի գան Փեքինի մէջ:

Մենասահորդ Սլաւիկ Հայրապետեանը 24-րդն Է Եւրոպայի Մէջ

Էստոնիայի մայրաքաղաք Թալինի մէջ աւարտեցաւ գեղասահքի Եւրոպայի առաջնութեան տղոց մենասահքի մրցումները: Հայաստանը ներկայացնող Սլաւիկ Հայրապետեանը ազատ ծրագրին մէջ վաստակելով 100,09 կէտ, եզրափակիչ փուլի 24 մասնակիցներու մէջ զրաւեց 24-րդ տեղը: Ընդհանուր հաշուարկով հայ մարզիկը 167,84 միաւորով նոյնպէս զրաւեց 24-րդ տեղը: Եթէ ոլիմպիական ուղեգիր նուաճած գեղասահորդներէն որեւէ մէկը չկարողանայ մեկնել Փեքին, մասնակցութեան իրաւունքը կը փոխանցուի հայ մարզիկին: Եւրոպայի ախոյեան հռչակուեցաւ ռուս Մարք Քոնտրատիւկ, որ ցոյց տուաւ 286,56 արդիւնք:



«Գատիսը» Հասաւ Քառորդ Եզրափակիչ Հարոյեանը Մասնակցեցաւ Ամբողջ Խաղին

Ֆութպոլի Սպանիոյ գաւաթի մտցաշարի 1/8 եզրափակիչին «Գատիսը» հիւրընկալուեցաւ Խիխոնի «Սփորտինկէն»: Հիմնական եւ լրացուցիչ ժամանակը աւարտեցաւ ոչ ոքի՝ 0:0: Յետխաղային 11 մեթրանոցներով «Գատիսը» առաւելութեան հասաւ 4:2 արդիւնքով եւ հասաւ քառորդ եզրափակիչ: Հայաստանի հաւաքականի պաշտպան Վարազդատ Հարոյեանը «Գատիսի» հիմնական կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ հանդիպումը:



ՀՈԳԵՅԱԼԳԻՍ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ

Լուլու (Խայան) Ֆերմանեանի մահուան քսաներկրորդ (22) տարեկիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Յունուար, 2022-ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝ Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան, Վիգէն Գուլումճեան:

Հրանդ Տինքի Սպանութեան

Շարունակուած էջ 8-էն

Տինքը հոգեբանական գերակայութիւն է, մենք այլեւս պաշտպանողական դիրքերում չենք նրա նման մտածողների համար: Դա կարող է զարմանալի թուալ, բայց ես պնդում եմ, որ մենք այժմ ունենք առաւելութիւն: Այն, ինչ այժմ պաշտպանական դիրքում է, ժխտում է: Նրանք պաշտպանողական հոգեբանութեամբ են անում այն, ինչ անում են, այս տարբերութիւնը կարեւոր է: Նրանք անում են այն, ինչ կ'անեն, բայց լաւ գիտեն, որ պարտուել են:

Միգուցէ Հրանդ Տինքը շատ դանդաղ է ներթափանցում այս հասարակութեան մազանօթներ: Նայէք ձեր շուրջը եւ կը տեսնէք, որ Հրանդ Տինքի (մտքերի) հետ զրուցելու, շփուելու են եկել նոր մարդիկ, որոնց նախկինում չէք տեսել:

Իհարկէ, կան նաեւ «նաւը լքող առնէտներ», բայց դրանք շատ քիչ են: Հրանդ Տինքին ճանաչել եւ հասկանալ ցանկացողների թիւն աւելանում է, քանի որ Հրանդ Տինքը ներկայացնում է մի նոր բան՝ միտք, որին մենք կարօտում ենք: Այն ցոյց է տալիս, որ մարդիկ հաւասար քաղաքացիներ են՝ ան-

կախ կրօնից, լեզուից կամ հաւատքից: Այն ներկայացնում է նոր հանրապետութիւնը եւ նրա պատկուծ ժողովրդավարութեամբ: Այն ներկայացնում է նրանց, ովքեր ասում են՝ «ես հաւասար քաղաքացի եմ՝ անկախ իմ կրօնից, լեզուից կամ մշակութից», ոչ թէ «ինչ երջանիկ է նա, ով ասում է, որ ես թուրք եմ»:

Եթէ Հրանդ Տինքին հիմնադիրը չյայտարարենք, չենք կարող վերականգնել այս հանրապետութեան կառուցուածքային անհաւասարութիւնը: Մենք չենք կարող վերացնել այն անհաւասարութիւնը, որը դրուել է այս հանրապետութեան հիմքում: Եւ այս կառուցուածքային սխալը մենք կ'ողորմենք՝ Հրանդ Տինքին հուշակելով նոր հանրապետութեան հիմնադիր: Հանրապետութեան պատկուծ ժողովրդավարութեամբ հնարաւոր է միայն այս կերպ:

Իմ վերջին խօսքը սա է. խնդրում եմ, հիմա բացէք թուրք-իւ-Հայաստան սահմանը եւ սահմանի դարպասը անուանէք Հրանդ Տինքի դարպաս: Սա մեծ քայլ կը լինի հանրապետութեան հիմնադրի սխալների վերացման ուղղութեամբ:

Առնօ Բարաջանեանը եւ «Յորժամ»

Շարունակուած էջ 15-էն

է չէ՞ հայրիկ: Մի խօսքով, մի քանի խոչընդոտներ յաղթահարելուց յետոյ ես հասա իմ նպատակին: Թէ գործից պիտի հանեն՝ թող հանեն:

Առանց մի խօսք ասելու հարկա չուշիկ քայլերով գնաց դէպի իր աշխատասենեակ՝ մինչ այդ մի անմեղ ժպիտ պարզեցնելով ինձ:

Երկուշաբթի առաւօտեան, սովորականից աւելի նկատելի հագուստ-կապուստով գնում եմ Ռադիոկոմիտէ: Նախամուտքին, դռների առջեւ կանգնեցնում է ծանօթ ուտիկանը.

- Անասեան՝ նախագահի մօտ:
- Գիտեմ, ես սպասում էի դրան:

Նախագահի քարտուղարուհին ինձ տեսնելով, շանթահար եղածի պէս վեր թուաւ տեղից

- Ընկեր Անասեան, խնդրում եմ մի ըստէ սպասէք, հարցնեմ տեսնեմ կարող է հիմա ձեզ ընդունել թէ՛ ոչ:

-Միտքով Նունիկ Չան, բայց ինչո՞ւ ես մի տեսակ վախեցած...

- Չգիտեմ, չգիտեմ..., ձեր մասին եմ մտածում...

Յստակ էր, որ օրիորդը ծանօթ էր պատմութեանը: Երկու երկվայրկեան անց նախագահի դրան ներսի կողմում էի: Սպասում եմ հրամանի, բայց ոչ մի ձայն չկայ, պարոնը երկու ձեռքերով բռնել է անկողնի սաւանի չափ «Սովետական Հայաստան» օրաթերթը եւ խորասուզուած է ընթերցանութեան մէջ: Քիչ անց.

- Հը՛, եկել ես հա՞..., հերոս ենք խաղում էլի՞...: Դէ որ եկել ես՝ մօտ արի ու մանրամասն պատմի՛

գիտես ինչի մասին է խօսքս:

Առանց որեւէ մանրուք բաց թողնելու, մանրամասն պատմեցի ամէն ինչ, չմոռանալով ճառել հայկական հոգեւոր երաժշտութեան անփառունակ վիճակի մասին, եւ որ, մեր պարտքը պիտի լինի եւրոպական հոգեւոր երաժշտութեան ժողովրդականացման հետ մէկտեղ, տեղ յատկացնել նաեւ մեր աննման հոգեւոր երաժշտութեանը:

Իմ ամբողջ «ելոյթի» ընթացքում ոչ մէկ վայրկեան ինձ չ'ընդհատեց նախագահը: Մի քանի ըստէ երկուսս էլ լուռ էինք: Յետոյ նա վեր ելաւ իր շքեղ բազկաթոռից ու մօտեցաւ ինձ՝ ակամայ ինձ ստիպելով, որպէսզի ես էլ ոտքի ելնեմ: Մօտեցաւ ու զսպուած ժպիտով, երկու ձեռքերով բռնեց ուսերս ու թափ տալով ամբողջ մարմինս ասաց.

- Գնա՛, գնա՛ աշխատիր, ես ամէն ինչ հասկացայ,- ուրիշ ոչ մէկ բառ:

Ելքին չհասած շուռ եկայ: Նախագահը կանգնած էր նոյն դիրքով, նոյն տեղում: Ես կանգնեցի մի պահ եւ ձեռքս բարձրացրի վեր՝ ասել ուզելով, թէ ի՞նչ են որոշելու աւելի վերեւերում:

Հասկանալով թէ ինչն է ինձ անհանգստացնում, այս անգամ արդէն բարձրաձայն, գրեթէ բղաւելով ասաց.

- Գնա՛, գնա՛ ասացի, եւ աշխատիր նոյն ոճով...

Սառուցը հալուեց: Կարծրամտութիւնը իր տեղը գիշեց առողջ տրամաբանութեանը: Հայկական ռադիոյից պարբերաբար սկսեցին հնչել հայ հոգեւոր երաժշտութեան գոհարներ:

ՄԵՆՔ ԿԱՊԱՀՈՎԱԳՐԵՆՔ ՁԵՐ ԱՊԱԳԱՆ, ՈՐՊԵՏՁԻ ԴՈՒՔ ԿԵՆՏՐՈՆԱՆԱՔ ՆԵՐԿԱԻ ՎՐԱ



RESIDENT INSURANCE PRODUCER
Accident and Health Agent,
Casualty Broker-Agent, Life-Only Agent, Property Broker-Agent

209 E. Alameda Ave., Suite 204
Burbank, CA 91502

WE INSURE YOUR FUTURE, SO YOU CAN FOCUS ON THE PRESENT



KARAPET S. DEMIRCHYAN CA LICENSE: 0C74479
demkarsinc@sbcglobal.net (818) 913-2414

Massis Weekly subscription form with fields for Name, Address, City, State, Zip Code, Country, Tel, and Email.

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680



DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- o JUVENILE DEFENSE o DOMESTIC VIOLENCE
- o ASSAULT & BATTERY CHARGES
- o DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- o VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- o IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- o ROBBERY AND THEFT OFFENSES
- o ASSAULT WITH A DEADLY WEAPON
- o CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- o CRIMINAL THREATS o WEAPON CHARGES
- o DRUG OFFENSES o SEX CRIMES
- o THEFT CRIMES o GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN
Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.



LAW OFFICES OF
ALICE TAVOUKJIAN, PC

www.TAVOUKJIANLAW.com
135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801

CALL FOR A FREE CONSULTATION
626.386.8606